

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

Դժուար էր այդ շրջանին, Կիւրին կոչումին ստուգարանութիւնը տալ: Մեր սովորական խօսակցութեան մէջ Կաւռին կը հնչէինք: Իսկ ոմանց կարծիքով՝ ան Կիւրոսի անունով կը կանչուի Կիւրին: Հայրս եւ հօրեղբայրներս, որ զրականութենէ եւ դիրքէ շատ բան չէին հասկնար, օր մը խօսակցութեան մէջ բնական հետաքրքրութենէ մղուած զայն կը յարմարցնէին Կիւրին (մտէք) տաճկերէն բառին: Կ'ըսէին թէ Անիէն եկեր հաստատուեր են. դժբախտաբար վաւերական չէին ըստածները. ոչ թուական կար եւ ոչ ալ արձանագրութիւն: Մեծ եղբօրս ծննդեան թուականը հայրս իր քար կոփելու գործիքին (տարախ) վրայ փորագրած էր, այն ալ թրքական թուականը, առանց ստուան եւ օրերու մանրամասնութեան: Հետեւաբար զանց կ'ընենք բոլոր այն կարծիքները, որոնք սլատմական հիմ չունին իրենց վրայ եւ մտքի ու բանականութեան տուեալներով կը մօտենանք անոր:

ԿԻՒՐԻՆԸ՝ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆՈՑՈՎ

Ծաւր: Լսած էինք, թէ եւրոպացի գիտնականներ եկած եւ ջանացած են «Ծովուն» եզերքը որմի պէս հարթ ապառաժին երեսը հին դարերէ մնացած գրութիւնը կարգաւ եւ կամ ընդօրինակել: Հետաքրքրութիւնը զիս ալ մղեց եւ քանի մը ընկերներու հետ դացինք տեսնելու պատմական մեծ արժէք ներկայացնող այդ արձանագրութիւնը:

Ծովը Ձախձորէն հակառակ ուղղութեամբ քաղաքին միւս ծայրն էր, գրեթէ 8—9 մղոն հեռու:

Ի՞նչ էր Ծովը: Մենք որ ովկիանոսի եւ մեծ ծովերու մասին միայն կարդացած էինք և տարուած անոնց անսահման տարածութեան գաղափարովը, տեսանք թէ մեր «Ծովը» շատ փոքր ծաւալ ունէր, եւ «լճակ» մը բաւական էր անոր անուան տրուած, որուն խորութիւնը 3—4 կանգունը չէր անցներ: Շուտուր լողորդներ ծովու կողին վրայ բարձրացած ցից ապառաժի վրայէն մաղըցելով՝ հպարտութեամբ կը նետուէին վար, կը խորասուզուէին իրենց լողալու շնորհքը ցոյց տալով Ձախձորցիներուն:

Ծովուն ջուրը՝ վերէն, ձորերուն մէջէն կու գար եւ իր բնական աւազանին մէջ լեցուելէ յետոյ, կը յորդէր եւ կը հոսէր դէպի հեռաւոր վայրեր, բնակչութեան կէսին թէ՛ խմելու եւ թէ՛ գործածութեան աղբիւր դառնալով: Ծովէն դուրս ելլելէ եւ ազատ ընթացքը շարունակելէ առաջ, մարդիկ զայն

պատած էին քարերով ընդարձակ աւազանի մը մէջ, ուր անվարժ լողացողները փորձեր կը կատարէին :

Ծովը եւ այդ աւազանը մեր աջ թեւին վրայ սկսանք մեր միտքը սեւեռել վերասլաց քարեղէն բարձրութեան վրայ : Պատի պէս ուղիղ ապառաժին վրայ որոշ կ'երեւար արձանադրութիւնը, մեր մեծադոյն հետաքրքրութեան առարկան . քարեղէն էջ մը, քանդակուած մարդոց ձեռքով, որոնք դարեր առաջ եկեր ու անցեր էին :

Գետնէն նայողը պէտք էր որ իր դըռնիք վեր վերցնէր մօտ 15—20 ոտք բարձրութեամբ անընթեռնելի պատմութիւնը լուծելու համար : Անծանօթ դարերէ ի վեր ծեծող անձրեւին ու փոթորիկին դէմ կուրծ տուող ապառաժը հաւատարիմ կերպով պահած էր մահահանացու մարդոց ձեռագործը կարեւոր կտակի մը պէս դեռ եւս կենդանի . ի հարկէ՝ ժամանակի եւ հնութեան կնիքը քօղի մը պէս իր երեսին վրայ առած : Ո՛չ, մեզի ընտանի չէին այդ գերերը եւ իրենք ալ մեզի կը նայէին եւ արգահատութեամբ եւ արհամարհանօք : Առեղծուածը կը մնար նոյնը եւ նոյնութեամբ :

Ընթերցող, դուն ըսէ, արդեօք մեր կռապաշտական դարերու մէջ ապրող նախնեաց լեզու՞ն է այն թէ հռովմէացւոց, որոնք Քրիստոսի 107 թուականին, իրենց աշխարհակալութեան եւ ծաւալումին շնորհիւ մինչեւ մեր դուռները հասած ու դրաւած էին շատ տեղեր : Սեւ Ծովուն եղերքը Պոնտոս եւ կապադովկիա հռովմայեցւոց (Յունաց) հետքերը կը պահեն մինչեւ վերջն ալ . իսկ այսօր անոնք ո՛չ մերն են եւ ո՛չ ալ անոնցը :

1895-ի կոտորածէն յետոյ տեղեկացանք, թէ մեր տեսածը միայն մէկ մասն է այդ շրջանի հրաշալիքներէն : Կը պատմէին թէ Հաճի Սարգիս աղա Մնասեանը Ծովը երթալու ատեն, թշնամիներէն նշմարուած է եւ ճամբուն վրայ սպաննուած :

Ծովուն վերին ձորերուն մէջ, ստորերկրեայ լայն քարայրներ կան եղեր, որոնք բաւական պիտի ըլլային Կիւրինի բնակչութեան կէսին իբր ապաստանարան ծառայելու : Բնականէն ջուրը առատ ու դիրքը անառիկ՝ նախնիքներու կողմէ պատրաստուած այդ անձանները ինչ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէին Կիւրինցուն, եթէ Հայերը ուտելիքի ու քիչ մ'ալ ռազմանիւթի պաշար ունենային իրենց հետ : Այն ատեն մերիները երկար-երկար ատեն թշնամիին քթին կրնային խնդալ եւ անոնցմէ ամենէն յանդուգներն իսկ դիտապաստ պիտի իյնային . «կեաւուրում սոն աքլը պէնիմ օլայտը» : Հայուն վերջին խելքը իմս ըլլար . կ'ըսէ առածը :

Եթէ մէկը ուշի ուշով հետեւի այս եւ նման ուրիշ տեղերու պատմութեան, պիտի համոզուի թէ Կիւրինի նախնի բնակչութիւնը, հալածանքի եւ բնութեան դէմ մայր հողին կառչած՝ պատրաստած է ստորերկրեայ բնակչութիւններ, ներքնուղիներով հաղորդութեան մէջ դրած է զանոնք, եւ փախուստի ճամբայ ալ բացած է :

Քսենեփոն Յոյն պատմագիրը Պարսից դէմ մղուած պատերազմին՝ որ ըրացած է Հռովմայեցի զինուորներու պարտութեամբ՝ երբ ձմեռ ատեն Հայոց աշխարհէն կ'անցնի, կը նկարագրէ Հայոց ստորերկրեայ բնակարանները, ուր ոչխար ու մարդ իբրեւ մէկ ընտանիքի անդամներ կը բնակէին : Կը յիշէ նաեւ հայուն իւրայատուկ հիւրասիրութիւնն ու աջակցութիւնը պարտեալներուն իրենց վերջին ծայր խեղճ ու թշուառ փախուստի ճամբուն վրայ, դէպի Սեւ Ծով :

Թովիրաֆ Երզրնը (Հոգաբուսմբը) : Այս տեղը տեսնելու փափաքը մէջս վառած ու մարած է : Հօրս պատմութեան համեմատ, ան զուտ մաղուած հողէ է, այն ձեւով, ինչպէս որ տեղի մը վրայ մէկը հող կը մաղէ եւ մաղուած հողը բնականօրէն կեդրոնը քիչ մը բարձր, իսկ շուրջը հետզհետէ ցած կ'ըլլայ, սա տարբերութեամբ որ այս հողաթումբը իր բարձրութեամբ ու ծաւալով շատ աւելի մեծ էր :

Սուլթան Համիա, որ մեր օրերու սարսափն եղաւ 1895 թուականին, անձեռնմխելի կը պահէր երկրին հարստութիւնը, թաղուած գետնի տակ : Եւրոպացիներու դիմումը հանքերու եւ քարիւղի մենաշնորհներուն համար, ապարդիւն անցած է : Հողը իրն էր եւ ծանր պատիժ կար անոր, որ օրէնքը կ'անսաստէր : Այս պատճառով հայրս մերժեց այդ խնդիրքս :

Կը պատմէր թէ այդ հողաթումբին տակ սենեակներ կան, թէ ինք մտած էր ուրիշի մը հետ գլխեր ատեն եւ մէկ սենեակէն երկրորդի մը հաղորդակցութեամբ գանձ փնտռած եւ անյաջող դուրս եկած էր : Կը հաւատար թէ Հոռոմները փախչելու ատեն, մասնաւոր ջանք թափած են պատրաստելու համար այդ հողաբլուրը, որուն ներքեւ իրենց հարստութիւնը թաղելով գացած են, օր մը վերագառնալու յոյսով :

Ծակ Եեպը եւ ալիմ «Մաղարան» : Դէպի Ակը երթալու ճամբան առնելով, կը հասնինք անոր եւ զայն մեր հետեւ թողելով՝ կը հետեւինք նոյն ուղղութեամբ ձորին մէջէն, որ սովորաբար չոր է եւ իբրեւ ճամբայ կը գործածուի այդ կողմի վիւղերը երթալու : Ակէն գրեթէ մզոն ու կէս քալելէ ետք, կը հանդիպինք Ծակ Եեպիմ, հարիւր քայլ բարձրութեան վրայ՝ ասրառածներու մէջէն փորուած երկու ծակեր, քով-քովի, որ երկու աչքի պէս վար կը նային բարձրէն :

1895-ի կոտորածէն առաջ, այդ ձորէն կ'անցնէի ու կը դառնայի շալկած պարկ մը լեցուն աղար (կովու կշկուր) եւ կամ հակով չապլա (վառեկանիւթ մը) : Ազատ կամ բեռով՝ սովոր էի նայել այդ երկու աչքերուն, ուր բարձրանալու համար մարդ պէտք էր թեւեր ունենար անպզի պէս ու թառիչ հոն :

Հոս տեղին չէ 1895-ի կոտորածին պատմութիւնը տալու : Բայց այդ օրերուն էր, որ ծանօթացանք հնութիւններու ներքին մասերուն : Նախ՝ Ակին Մաղարային, որ սենեակի մը ծաւալն ունէր, մուտքին եւ ելքը միեւնոյնն էր, ընդարձակ չէր, այլ սենեակի մը չափ, եւ շատ աւելի կը նմանէր գայլերու որջի : Անոր դիրքն ալ չունէր մասնաւոր առաւելութիւն մը շատուորի դէմ կուռելու համար, բայց ճամբայէ հեռու ըլլալով՝ թաքստոցի տեղ կրնար ծառայել : Որոշ է թէ մարդկային ձեռքի եւ աշխատութեան պտուղն էր : Երեք օր մնացինք հոն, ուրկէ տեղափոխուեցանք Ծակ Եեպը, կողմնակի ձորակէ մը վեր բարձրանալով : Ծակ Եեպը՝ բաղդատմամբ Ակին Մաղարային, տասը անգամ աւելի մեծ էր եւ դիմադրութեան համար ամէն յարմարութիւն ունէր : Զուրը հեռու չէր ո՛չ մէկէն եւ ո՛չ միւսէն :

Ղալա (Գալէ) : Կիւրիների կեդրոնական մասին վրայ Ղալան իր վիթխարի ճակատով, անոր հնութեան մասին կը վկայէ : Քանի մը անգամ անոր դէմքէն քարեր թափած են, բայց դեռ իր ամբողջութեան մէջ էր կարծես :

Անոր արտաքինէն աւելի ներքին մասը հետաքրքրական է եւ կը համապատասխանէ մեր նախահայրերու պատմութեան եւ ինքնապաշտպանութեան հարկին տակ վարած կենցաղին, նկատելով թէ անկէ մինչեւ Պուրճը հաղոր-

դակցութեան մէջ դրուած է ստորերկրեայ անցքով մը: Պուրճը՝ Էօրէնի բլուրներուն վրայ բնակութենէ քիչ հեռու տեղ մըն է, որ ելքն է Ղալային եւ կամ մուտքը, որ դէպի Ղալան կ'առաջնորդէ, մօտաւորապէս 4 մղոն հեռաւորութենէ մը:

Կը պատմէին, թէ Ֆէրման Մահլայէն Տ. Կարապետ Քահանան, իր երիտասարդութեան օրերուն, մէկ-երկու ընկերներու հետ, մոմերով եւ լապտերով յառաջացած է Ղալայէն մինչեւ տեղ մը, ուր ջուրի կաթկթուքներ եղեր են եւ քանի մը անգամ մոմերը մարեր են: Անոնք չկրնալով շարունակել, ստիպուած դարձեր են ետ: Իրենց յառաջացած միջոցին հանդիպելով կաթկթուքին, կարծած են թէ մինչեւ գետը հասած ըլլալու են: Բնական է, Պուրճը երթալու համար գետին ներքեւէն պէտք էր անցնել, եւ եթէ գետնուղին շիտակ ուղղութեամբ փորուած ըլլար, որ շատ հաւանական է, այն ատեն առ նուազն մղոն մը տեղ դացած ըլլալու են անոնք:

Գիտենք թէ Հայոց Սենեքերիմ թագաւորը Բիւզանդիոյ Կայսեր համաձայնութեամբ, Վասպուրականը փոխանակեց Սեբաստիոյ հետ 1021 թուականին: Կիւրին, Սեբաստիոյ սահմանին, եւ անկէ ոչ շատ հեռու՝ կրնայ մաս մը Հայոց ընդունարանն եղած ըլլալ այդ ժամանակէն, եւ կամ թէ, Ռուբինեանց թագաւորութեան օրով՝ Յունահայտակ Հայեր կրնան տեղաւորուած ըլլալ հոն: Իսկ անկէ շատ առաջ հայ բնակիչներ եկած ու դացած ըլլալու են անտարակոյս:

Կիւրնոյ Ղալան իր ներքնուղիներով հին ժամանակի ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ ամրութիւն եղած ըլլալու է: Մեծերու պատմածին համեմատ, մեր հայրերու բնակութիւնը եղած է Ղալային վրայ: Օր մը Ղալային աջ կողմէն քերելով վեր բարձրացանք հօրս հետ, որ խոստացած էր ինծի ցոյց տալ մեծ հօրս եւ անոր հօրը բնակած տունը: Իրարու կից եւ միայն մէջտեղերը պատերով բաժնուած յարկաբաժիններ էին Յ—4 ոտք բարձրութեամբ դեռ կանգուն, տեղ-տեղ աւելի ցած գետնէն: Յայտնի կ'երեւար, թէ տուներու առաստաղը գետնին երեսէն վար կը մնար, յատակը լեցուած էր, մեծ մասամբ, ժամանակի ընթացքին:

Հին բնակչութիւնը, արծիւի նման, Ղալան ընրած է եւ անոր բարձրութեան վրայ իր բոյնը դրած. Ղալայէն ցած իջնելով ըրած է իր պաշտամունքը, դուցէ ներքնուղիով կապուած եկեղեցիին, ինչպէս Թ. Թահմիզեան իր յուշերուն մէջ կու տայ մեզի Գետնափոր վայր մը, այժմու Մայր Եկեղեցւոյ տեղը եւ կամ քովերը: Ղալան եղած է իրենց ամրութիւնը եւ անոր հովանիին տակ Հայ ընտանիքներ իրենց գոյութիւնը, կրօնքն ու լեզուն պահեր են շատ դժուր դակ պարագաներու մէջ:

Հարանիքներու մէջ երգուած «Ղալանըն պաշրնտա էֆերլեր սառը» թըրքաբարբաւ երգը, որ մեզի ամէնուս ծանօթ է, մեր նախնեաց կեանքին եւ անոնց նիստ ու կացին հարազատ պատկերը կու տայ: Քանի մը համար տանք այդ երգէն.

Ղալանըն պաշրնտա էֆերլեր սառը,
էֆերլեր, պիչերլեր, էտերլեր ֆեարի,
Տոսթ իչուն սագլարլար հայվայը, նառը,
Էօյլէ օլուր, պէօյլէ օլուր պագի կիւզլին
ձիվկսի չօգ օլուր պագը կեօզլին:

Ղալատան ղալայա շահին ուչուրումսմ
Այս իլէ, վախ իլէ էօմրիմ կէշիրտիմ
Տոսթա շէֆէր էգոիմ, շէրպէթ իշիրտիմ
Էօյլէ օլուր, պէօյլէ օլուր պագի կիւզէլին
Ճիլվէսի չօգ օլուր պագը կէօզէլին :

(Ազատ թարգմ.)

Բերդին վերել կը ցանեն եգիպտացորեն,
կը ցանեն, կը հնձեն, կ'ընեն շահը,
Սերկեւիլն ու նուրը բարեկամի կը պահեն,
Այսպէս ու այնպէս կ'ըլլայ նագը սիրունին,
Պչրանքը շատ կ'ըլլայ երբեմն աղուորին :

Մէկ բերդէն միւսը թոցուցի բազէ
Ախով ու վախով կեանքս անցուցի,
Շաքար փշրելով, բարեկամիս շէրպէթ խմցուցի,
Այսպէս ու այնպէս կ'ըլլայ նագը սիրունին,
Պչրանքը շատ կ'ըլլայ երբեմն աղուորին :

Ղալային կից Գերեզմանը : Ղալայի միւս կողմն էր Գերեզմանը, ուր
չտեսի իրարու վրայ թաղուեր էին : Ապրողը շատ էր թէ մեռնողը, ճշգրիտ
հաշիւ տալ կարելի չէր : Սա գերեզմանը քիչերու միայն սարսափ չ'ազդեր :
Լսեր եմ երբեմն որ, ճամբորդներ ընտրած են գիշերել գերեզմաններու մէջ
իրեւ շէնլիֆ՝ մարդաբնակ : Մարդիկ առհասարակ խոյս կու տան անկէ, որ
իրենց վերջին կայանը ըլլալու սահմանուած է :

Սաղին Գերեզմանը դացեր ենք երգերով ու շարականներով : Ուր որ կը
կարծէին թէ թափուր է, այսինքն հողը կոյս է, կը փորէին նոր մեռելի հա-
մար, հոն ուրիշի մը ոսկորները կը գտնէին, զորս հանելով նորին հետ զանոնք
կրկին կը թաղէին :

Հայերու Քրիստոնէական կրօնն ու արարողութիւնը, սկիզբէն մինչեւ
վերջ, մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը, մահմետականներուն
նողկանք ազդած են : Թէեւ եղեր է շրջան մը, երբ Հայերը իրենց մեռելը թա-
ղելու համար, թուրք կառավարութենէն արտօնագիր կ'առնէին եւ ապա կը
թաղէին : Սա է, այդ «արտօնեալ» թուղթին ամբողջ պարունակութիւնը .
«Հէր նէ իսէ տէ, քեափիր քիւֆիւր իսէ տէ, քոփրագ քէ գապուլ էքմէգ իսէ
տէ, կէտին շու իքնզըրը տէֆ էտին» : Այսինքն, «Ինչ որ ալ ըլլայ, եթէ ան-
հաւատ-մանհաւատ ալ ըլլայ, նոյնիսկ եթէ հողը զայն չընդունի, դացէք այդ
խողը տեղ մը նետեղէք» :

Մեռել թաղելու արտօնութիւն ստանալը հին ըլլալու է : Հայրս կը յի-
շէր եւ կը պատմէր թէ, Տէր Աբրահամ Քահանան Սաղ թաղէն ի վեր Գերեզ-
մանի ճամբուն վրայ, իր բարձր ձայնովը թնդացնէ եղեր սար ու ձոր, մէկ
մղոն հեռաւորութենէ, երբ կը սկսի երգել «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն
մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան : Անսկիզբն Աստուած
սկիզբն արարչութեան ի հողոյ ստեղծէր զմարդն առաջին», եւ այլն : Անբնա-
կան կը թուի որ այսքան խստութեան եւ հալածանքի ատեն կեալուորին ձայնը
այդչափ բարձր էլնէր : Մեր օրով ալ մենք կ'երգէինք խմբովին այդ տխուր

չարականը, կ'երգէինք ու կը կրկնէինք «Հող էիր անդրէն եւ ի հող դարձես»ը՝
ամէն մէկ համարին վերջը, որուն իմաստը ծանօթ էր թուրքերուն:

Սաղին Գլուխի գերեզմանը, Ղալալին միւս կողմի սարին վրայ եւ սարն
ի վար մինչեւ ձորը երկարածգուած՝ ամենէն հին է եւ ամենամեծը: Հին է ի
հարկէ առանց հաշուելու այն գերեզմանները, որ Հոռոմի գերեզման կը կո-
չէին: Թուրքն ալ ունէր Գոռել: Ասոնց երկուքը իրարու հետ բաղդատելով՝
թուրքին գոռելը հայերուն գերեզմանէն աւելի մեծ չէր տարածութեամբ:
Կարծեմ թէ թուրքերը միայն հող կը թաղուէին, իսկ հայերը աջ ու ձախ
ցրուելէ յետոյ, ունէին Չախձորի գերեզմանատունը եւ ուրիշ տեղ ալ: Պա-
լազայ մը եւս կայ, որ հայերուն գերեզմաններու շատերը քար եւ արձանա-
գրութիւն չունէին եւ յաճախ իրարու վրայ կը թաղէին մեռելները: Թուրքին
գոռելները շուրջանակի քարերով պատուած էր եւ սնարին կողմը տնկուած
կ'ըլլար քար մը միշտ, որուն գագաթը դլուխի ձեւով կոփուած ու կլոր-
ցուած էր:

Հոռոմի գերեզման: Կիւրինցիները իրենց երախաները շորերու մէջ կը
պլլէին, թեւերն ու ոտքերը կը կապկպէին, անոնց կէս մէջքէն վար աղուոր
տաքուկ հող կը դնէին ու կը փաթթէին: Բոլոր փոքրիկ ունեցողները, ձմե-
ռուան համար նախապէս հող կը մաղէին ու կը պատրաստէին, ինչպէս որ ի-
րենց կից ամսուան ուտելիքները՝ ալիւր, պղուր, ծեծած, ռուպ (պէքմէզ)
պաստեխ, քեսմէ, թութ, ընկոյզ եւ այլն կ'ստրարէին:

Հող կը դործածէին նաեւ տուները ծեփելու համար դուրսի կողմէն՝
ճերմակ կաւ մը: Նոյնը կը դործածէին նաեւ ներսի պատերուն, իսկ
յատակին համար՝ կարմիր հող մը: Տարին անդամ մը առնուազն, որեւէ տուն
պէտք էր որ դուրսէն ու ներսէն ներկուէր, եւ ա՛յդ՝ կիներուն դործն էր: Ա-
նոնք կ'երթային հողը բերելու, կը մաղէին զայն, կը կրէին, իրենց ծեփը կը
խառնէին ու կը ծեփէին: Խորունկ, զանձ գտնելու խարուսիկ յոյսով. հին
դարերէ ի վեր մնացած գերեզմանները տակնուվրայ կ'ընէին... Երեւան հա-
նելով ոսկորներ՝ որոնք հողին մէջ թաղուած էին եւ կը վկայէին դարերու մէ-
ջէն անցած հալածանքներու լեզուով: Որու մտքէն կ'անցնէր, թէ մօտ ատենէն
կարգը հայուն էր, որ իր մեռելներն ու գերեզմանները թողած, պիտի քշուէր
հեռաւոր անապատներն ու աշխարհի չորս կողմը:

Ալը: Ալը ամառուան տաք օրերուն, իր սքանչելի տեսարանին հետ՝
հանգիստի ու ժամանցի աննման վայր մըն է: Անոր ջուրը ծոցի մը պէս պա-
տած են մարդիկ, ցած կողմէն քարերով ու հողով, եւ ձորին երկու կողերուն
վրայէն աջ ու ձախ մէյ մէկ առուի ակօս փորած են, որ մօր մը ստինքին պէս
Չախձոր թաղի վերին բնակչութեան հողի ու կենդանութիւն կու տար:

Ակին եղերքը ուռիներ շուրջանակի՝ իրենց հովանին ու զովութիւնը
կ'ընծայէին իրենց տակ հանդչելու եկած բաղդութեան: Լուր օրերը, տաքին,
հովիւն ու դառնարածը լեռնէն վար կ'իջնէին եւ իրենց ծարաւը կը յագեցնէին,
դառներն ու ոչխարները մակաղելով հոն: Ակին ջուրը այնչափ պաղ է, որ լո-
ղացող մը հազիւ թէ հինգ վայրկեան կրնար մնալ անոր մէջ:

Կը պատմէին, թէ Ալ տէտէն ու Ալին իրարու հետ գրաւի կու դան իրենց
կրօնքին ուղղափառութիւնը ցոյց տալու համար եւ օր ու ժամանակ կ'որոշէն,
որ իրենցմէ իւրաքանչիւրը տէգը դեմնին գարնելով ջուր պիտի բխեցնէ անկէ:
Ալին իր եւ իր կրօնքին խախտու դիրքը դիտնալով, օր առաջ տեղը կը փորէ
դաղտնի եւ քանի մը հատ ջուրով լեցուն տիկ կը թաղէ եւ վրան ալ քանի մը

Թիզ հող կը լեցնէ : Որոշուած օրը՝ լուսնալու գելչերը, վայրի խողեր կու գան, էրենց դունջերով կը փորեն հողը եւ տիկերուն մէջի ջուրը կը խմեն : Մրցման ժամը կը հասնի . նախ Ալին իր աէզը կը զարնէ բայց ջուր չ'էլլեր : Այն ատեն Ակ տէտէն իր սուր նիզակը կը զարնէ գետնին եւ ահա ջուրը կը սկսի բխիլ ու դեռ կազմել : Այդ օրէն սկսեալ՝ թուրքերը կ'ատեն խողը եւ կը հալածեն զայն իրբեւ իրենց պարտութեան պատճառ :

Ակ տէտէն այդ տեղոյն սուրբն էր, Քրիստոսի հետեւող եւ անոր հաւատքովն ու հրաշքով օժտուած : Ան կարճիր ձի մը ունեցած է, որուն պայտին դրոշմը Ակի բլուրին հողը ծածկող խողը ու յաղթ ապառաժներուն վրայ քանդակուած է : Այդ քարերը 8—10 մաս թանձրութեամբ եւ 6—8 ոտք մեծութեամբ իրարմէ քանի մը քայլ հեռու, կարծես թէ նետուած էին հողին վրայ, երբեմն մէկ ծայրը հողին մէջ : Կար հատ մը, մասնաւորապէս այս խումբէն հեռու, գետին միւս կողմը, որ անձրեւին ատեն պատասպարան կրնար ըլլալ 7—10 տղոց : Անոր տակ կը նստէինք տեղատարափի ատեն : Փոխնի փոխ մէկ քարէն միւսին կը վազէինք եւ իրարու ցոյց կու տայինք Ակ Տէտէի ձիուն պայտին հետքերը :

Կեոք Բունար (Երկնային Աղբիւր) : Ուսկից է այս տաճկերէն անունը, յայտնի չէ : Ղարասար գիւղն ալ թուրքերէն բառով կ'ըսուած է, հակառակ անոր որ յիսուն տուննոց զուտ հայ բնակչութեան մը օրրանն եղած է : Կ'ըսէին թէ հոն թուրք չի կրնար ապրիլ, որովհետեւ Ս . Սարգիս թուրք չ'ընդունիր իր գիւղին մէջ :

Ղարասարը Չախձորի հարաւային կողմը կ'իյնայ, Կիւրիէնէն 8—10 մղոն հեռու : Մէկ անգամ միայն զացեր եմ հոն, լեռներէ ու ձորերէ կարճ ճամբան կտրելով : Այդ տարին Մանուկ Խմմուս տղան, Սահակը (յետադային Տէր Իդնատիոս), Ղարասարու վարժապետն էր, ինձմէ հինգ տարու մեծ : Անոր թելադրութեամբ կ'երթայինք տեսնելու Կէօք Բունարն ու Ս . Սարգիսի այրը (մաղարա) քանի մը ընկերներու հետ : Ճամբան կրկնակի երգեց Ս . Սարգիսի շարականէն շատ մը համարները : Կը ձայնակցէինք իրեն :

Կեօք Բունարը ձորի մէջ չէ Մովսն պէս . կը նմանի աւելի լեռնադաշտի մը : Բաւական ընդարձակ էր ու տարածուն : Լողորդներ մէկ կողմէն միւսը անցնելու փորձեր կ'ընէին : Մեծ էր Կէօք Բունարը եւ շատ խորունկ, Մովէն ալ լայն էր : Իսկ անոր բնական դեղեցկութիւնը սքանչելի : Երազներու աշխարհիս մէկ սրբազան մասն է այն, անջնջելի եւ անեղծանելի :

Ղարասար զացողը, երբ գետը հասնի, նախ քան դէպի ձոր իջնելը՝ իր դիմաց կը տեսնէ գիւղը տանող ճամբան՝ գետէն անդին, պողոտայի մը պէս լայն : Իսկ գետը իջնելու համար պէտք է օձապտոյտ եւ նեղ դարձուած քներով սահիլ գրեթէ մինչեւ կամուրջը, որ լայն է նոյնպէս : Կամուրջէն անմիջապէս յետոյ, գիւղին ճամբուն ձախ կողմէն, հակայի մը պէս կանգնած կ'երեւի Ղարասարի սեւ ժայռը, մեր դիտած տեղէն շատ աւելի բարձր, իր յաղթ հասակով : Անոր կատարը ոչ մէկ մահկանացու կոխած ըլլալու է . արծիւներն ու անգղերը միայն պիտի կրնային թառիլ հոն : Լեռնաշղթայի մը կը նմանի, որ կը սկսի ճամբուն քովէն եւ կ'երկարի դէպի վար, կազմելով անդունդ մը ձորին երկու կողերուն մէջտեղը, որուն յատակէն գետը խելայեղօրէն կը թափի ցած : Իսկ գետին միւս կողմը՝ աջ թեւի վրայ, որ ցած է, պարտէզներ են, գիւղի տուներէն անջատուած : Հսկային նետած հասակէն ու կատարէն յետոյ

կու դայ Ս. Սարգիսի մաղաքան, որ շարունակութիւնն է սեւ ժայռին, ուր քիչ-չատ հնարաւորութիւն կայ մագլցելու, ետեւի կողմէն յառաջանալով:

Ղարասարի գետը մեր Ակին ու Ծովին ջուրերէն շատ էր եւ անոնց միանալով իր ընթացքին մէջ կը մեծնայ եւ ալ աւելի յառաջ երթալով՝ կը ճանչցուի Ագ Սուլա անունով:

Ս. Սարգիս Հայ Ժողովուրդին նեղութեան պահուն օգնութեան հասնող խնդրահատար սուրբն է: «Աման Ս. Սարգիս, դատադ առնեմ հասիր», եւ ան անպատճառ կը հասնի իր ճերմակ ձիուն վրայ, կորուածին ճամբան կը բանայ, եւ թշնամին կը հալածէ: Գիւղացին իր սուրբին օգնութեան յոյսով փըրկած է իր դոյքն ու գոյութիւնը եւ իր զէնքին կապուած ըլլալով՝ իր սուրբը ճանչցուած է թշնամիին ալ, Խըտըր Ելէգ անունով: Հարեւան թուրքն ու քիւրտը ակնածանքով վերաբերած են վանքին ու անոր կալուածներուն հանդէպ: Կ'ըսէին թէ Մանըրըգ զիւղի վանահայրը, երբոր վանքին ոչխարները կը փախցնեն՝ աւազակներու ետեւէն ինկած՝ իր սովորութեան համեմատ կը կանչէ եղեր. «Ս. Թորոս հասիր»: Մանըրըգն ալ իր Ս. Թորոսը ունի, Աչոտի իր Ս. Յակոբը: Ղաւախ զիւղը, Ձախձորի մօտիկ, ուր քանի մը հայ տուներ կան եւ թուրքերու հետ խառն կը բնակին, ունին իրենց Ս. Յակոբը: Իսկ Ս. Վառվառ տեղ մըն է, ուր թուրքեր կան եւ բնականէն հետաքրքրական տեսարան մը չունի: Ճերմակ կտուր անթիւ կտորներ կախուած են թուրքերու ճիւղերէն, այնպէս որ տերեւ չերեւար գրեթէ: Դող ունեցող կ'երթար հոն դրացիներով եւ բարեկամներով, կը լողնար պաղ ջուրով եւ այդ մացառներուն կը հանդուցէր իր հին շապիկէն կտոր մը. դողը հոն կապուած կը մնար եւ ինք բժշկուած տուն կը դառնար: Ամէն տարի հիններուն վրայ նորերը կու գային. հին ծուէններ կային, որ դզուած ու մաշած՝ հովէն կ'երեւային տեսապէս: Ս. Վառվառ դող բժշկելու շնորհքը ստացած էր Աստուծմէ:

Տէր Գասպար Բինյ. Չառիկեան: Մէկու մը կենսադրականը անսխալ ընելու համար, երբ կը պակսին արձանագրութիւն կամ աղբիւր, գոնէ պէտք է ժամանակակից ըլլայ եւ շփումով մօտիկ՝ անոր հասարակական եւայլն գործունէութեանց: Կարեւոր է ունենալ նաեւ երբեմն դաղափարի տարբերութիւն, փորձով տեսած ըլլալ անոր հասունութիւնը, հեռատեսութիւնը, նուիրումն ու արժանիքը ազգային, կրթական եւ եկեղեցական խնդիրներու մէջ:

Տէր Գասպար քահանայի կեանքը 90 տարի համարելով, անիկա մեզմէ առնուազն երեք սերունդ մեծ էր: Ուրեմն ոչ թէ կենսագրութիւն, այլ պարզապէս քաղուածքներ պիտի ընեմ անոր կեանքէն քանի մը տարուայ անձնական ծանօթութեանս հետ կցելով այն ինչ որ լսած ենք մեր մեծերէն:

Դեռ հազիւ խելահաս էինք, Տէր Գասպար ծերութեան հասակին մէջ էր արդէն, յաղթ, շէն, փառաւոր ու ակնածալի, Ժողովուրդէն տեւապէս սիրուած միանգամայն: Խեղճ ու մուրացկան քահանաներէն չէր ան: Անոր ծուխերը հարուստ էին: Հարուստ էր ինքն ալ: Ղարասարի մէջ մեծ թիւով փեթակներ եւ պարտէզներ ունէր:

Քաջ, յանդուզն ու անվախ էր: Անոր առասպելական ուժին մասին շատ կը խօսուէր: Հեքիաթ էր եղած, Կիւրիներէն Գարասար զիւղի ճամբուն վրայ արջու մը հետ անոր ունեցած գիրկընխառն մենամարտութենէ մը յաղթական դուրս գալը:

Մեզի կը պատմէին նաեւ թէ տէրէպէյիներու օրով, Տէր Գասպար ջորիին վրայ նստած առանց թուրք մեծերու ներկայութենէն քաշուելու իր

Ճամբան կը շարունակէր, մինչդեռ ուրիշ հայեր, յարգանքի համար, եւ կամ իրենց վախէն, այդ նշանաւոր թուրք մարդոց թաղէն անցնելու ատեն պէտք էր որ վար իջնէին ու քաշէին :

Տէր Գասպար իբրեւ քահանայ արդարեւ պատիւ կը բերէր իր ժամանակակից հայ կիւրիւնցիին: Լեզուանի էր եւ հեղինակութիւն ունէր, ուր որ ալ ըլլար: Չանազան ձեւերով ի նպաստ եկեղեցւոյ եղած ձեռնարկներու մէջ գիտէր արդիւնաւոր հասոյթ գոյացնելու կերպերը:

Կատակախօս էր նոյնիսկ իր յանդիմանական շեշտին մէջ: Չախճորի եկեղեցիին շինութիւնը ըմբարտ մօտ էր: Կիրակի իրիկուն մը գացեր էի դիտելու շէնքը: Այդ ատեն 13—14 տարեկան հազիւ կայի, ունէի զօրաւոր ձայն. հօրս թելադրութեամբ ձայնաւորութիւն կ'ընէի մայր եկեղեցւոյ մէջ: Տէր Գասպար նստած էր եւ խումբ մը մարդիկ իր շուրջ բոլորուած: Երբ գիտ տեսաւ, իր քով կանչեց ու սկսաւ հետս խօսիլ: Գանդատ ունէր, կ'ուզէր որ նորաշէն եկեղեցին շապիկ հագնէի: Ամնչկոտ էի, թէ ալ Մայր եկեղեցիէն դուրս, ոտքս վարժ չէր ժողովուրդին երեւալու: Տէր Գասպար այսպէս սկսաւ իր կատակախօս յանդիմանութիւնը:

— Դու մեր եկեղեցին շապիկ հագնիլ չես ուզեր, հա՞ տէ՛յուս: Ես ալ պիտի չթողում որ Չախճորէն աղջիկ առնես: Գնա Ղարատեփէէն, Սաղէն բարակուկ, չորցած աղջիկ մը առ: Թող հիւանդանայ եւ մեռնի որ բացը մնաս, տէ՛յուս քեզի կիտի տէ՛յուս»: Իր սիրած ածականն էր այս:

Օր մը Մայր եկեղեցւոյ վարժարանին վերի յարկը, Նշան Վարդապետ Չատրճեանի աշակերտներուն քննութիւնը կը կատարուէր: Ներկայ էին Տէր Գասպար, Աւետիս Պատուելի Պըթիկեան (գիշերօթիկ), Տէր Յեսու Վարդապետեան, Վարդան Տէմիրճեան եւ ուրիշներ: Իբրեւ առաջին կարգի աշակերտի, հարցումը հարցումի ետեւէն կը տեղար: Քննութիւն տուողը պէտք էր որ ամէն բան գիտնար, իսկ քննութիւն առնողը իրաւասու էր հարցնել դժուարինը, խրթինը, իր բոլոր գիտցածը: Կարգը եկած էր զբարբարի դասին: Տէր Յեսու աշակերտին ուղղելով.—

— Ըսէ տեսնեմ, «Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի» այս նախադասութեան մէջ մեծը լոյսին է թէ Հայրապետին,—

— Լոյսին է, ըսաւ աշակերտը:

Տէր Յեսու գլուխը շարժեց ու աւելցուց,— կը սխալի'ս:

Պատ. Պըթիկեան մօրուքը իր ձեռքին մէջէն սահեցնելով, դարձաւ Տէր Յեսուի եւ հաստատեց՝

— Շիտա՛կ կ'ըսէ տղան:

Գրաբարի մէջ երկու տխրաններու բաղխումը մօտալուտ էր: Տ. Գասպար նշմարեց եւ գալիք փոթորիկը կանխելու մտահոգութեամբ իր կատակախօսն շեշտով ըսաւ.—

— Է՛, ալ հերիք է հարցուցիք. եթէ կ'ուզէք բան սորվիլ տղունմէ հարցուցէք, ապա թէ ոչ բաւական է:

Միջադէպը վերջ դտաւ ինչպէս նաեւ զբարբարի քննութիւնը:

Տէր Գասպարի մեծադոյն դործն եղաւ Չախճորի Ս. Փրկիչ եկեղեցիին քննութիւնը: Այր ու կին, տղայ ու աղջիկ իրենց ծնողաց հետ քահանային շուրջը հաւաքուած, սուրբ դործին համար կ'աշխատէին: Անդամ մը անոնց յորդոր կը կարդար եւ կը թելադրէր որ քարհանէն երթան շալակով քար կրելու սկսին,—

— Զեղ տեսնեմ զաւակներս, քալեցէ՛ք, եւ աւելի աշխոյժ ու եռանդ զնելու համար, — այդպէս չե՛ն քալեր, այսպէս կը քալեն, ըսելով, խոշոր ու արագ քայլերով յառաջ անցաւ: Ժողովուրդն ալ իր ետեւէն հետեւեցաւ դէպի քարհանը: Մեծն ու փոքր ամէնքն ալ, որոնց մէջ էր նաեւ ինք, մէյ-մէկ քար շարկած մեղուի պէս աշխատեցան:

Տէր Գասպարի այդ արագ քալելը, զիս ետ ետ կը տանի գրեթէ 7—10 տարի առաջ վերի թուականէն: Օր մը հայրս իր սովորութեան համեմատ զիս եկեղեցի տարած էր: Զարմանալի է, որ Զախճորի վերին հեռաւորութենէն մինչեւ Մայր Եկեղեցին երթալը: Այդ օրը մեծ եկեղեցական մը պատարագ կը մատուցանէր: Արդօք Ղեւոնդ Եպսկ. Շիշմանեանը նո՞ր եկած էր Կիւրին, չեմ զիտեր: Վերջապէս պատարագի արարողութեան պահուն, սպասարկութեան պակասը մէկէն լեցունելու համար, Տ. Գասպար, որ այդ օրը իրբեւ հիւր Մայր Եկեղեցւոյ դասին վրայ իր տեղը դրաւած էր, փոխանակ կողմնակի քայլեր առնելու դէպի քարէ աստիճանները, մէկ ոստումով դառննալով պատարագի շինքի հասաւ: Դասէն խորանը երեքուկէս ոտք, գոյցէ քիչ մ'աւելի բարձրութիւն ունէր: Պատարագիչ քահանան, որ աստիճան առ աստիճան կը բարձրանար այդ սուրբ լեռը՝ խորանը, խոստովանութեամբ եւ երկիւղով «Դատ արա ինձ Աստուած եւ իրաւ արա՛ ինձ ի դատաստանի իմում» Սաղմոսով, Տէր Գասպար մէկ քայլով բարձրացած էր հոն:

Որչափ որ ալ Տէր Գասպարը տարէց էր, դեռ իր մէջ հին ուժին ու կորովին հեռքերը կը պահէր, նոյնիսկ այն թուականէն յետոյ, երբ մեծագոյն հարուածը իջաւ ծանր լախտի մը պէս, անոր հասունացած տարիքին վրայ:

Օր մը, յանկարծ լուր հասեր էր թէ իր մէկ հատիկ զաւակը Հաճի Գասպար Զատիկեան⁽¹⁾ Հալէպի մէջ մահուան անկողնին զատապարտուած իր հայրը կ'ուզէր տեսնել: Որչափ որ կը յիշեմ գիշեր ու ցերեկ ճամբայ կտրած է Տէր Գասպար նախ իր ջորիով, յետոյ ձիով ու երեք օրէն հասած է Հալէպ: Քանի մը վայրկեան միայն դառնուած է իր որդւոյն սնարին վրայ եւ զայն յանձնած անողոք մահուան: Արդարեւ անդարձանելի կորուստը իր ծերութեան վրայ շատ ծանր էր ազդած: Ատկից վերջն էր, որ եկեղեցւոյ շինութեան ձեռնարկած էր, նուիրումով:

Զախճորի Ս. Փրկիչ եկեղեցիին շինութեան հետ եւ անոր մէջ Տ. Գասպար իր գերեզմանը պատրաստած էր կոփուած քարերով ու խոշոր կափարիչով մը ծածկուած, եկեղեցիի մուտքին ձախ թեւին վրայ, ուր եւ թաղուեցաւ 1896-ին:

Չախ ճարի Ս. Փրկիչ եկեղեցւոյ շինութիւնը: Տ. Գասպարի մեծագոյն գործն եղաւ Զախճորի Ս. Փրկիչ եկեղեցւոյ կառուցումը, որուն համար յարատեւ ջանք թափեց: Իր ազդեցութեան շնորհիւ հարուստ, միջակ թէ աղքատ՝ բոլորը աշխատանքի լծեց: Ժողովուրդին մէջ շինութեան աջակցելու պատրաստութիւնը շատ զօրաւոր էր: Կամաւորներու բանակը Կիրակի օրերը եկեղեց-

(1) Հալէպի մէջ Հաճի Գասպար Զատիկեանի նկատմամբ հայրեմասէր հայու մը բոլոր յատկութիւնները իր վրայ մարմնացուցած ըլլալը կը վկայէին շատեր: Այն տուած է կարօտ հայրեմակիցներու նիւթակամ եւ բարոյակամ ամէն աջակցութիւն: Եղած է բարի ու հեզ իր բնաւորութեամբ եւ իբրեւ վամառակամ ցանկալի դիրք մը գրաւած: Երկու գաւակ թողուցած է Զատիկ եւ Յովհաննէս անուններով, որոնք եթէ չեմ սխալի 45—50 տարիքին մէջ պետք է ըլլան: Տէր Գասպարի գերդաստանին շատախոյններէն մեր մէջ ունինք Տոքթ. Գասպար Զ. Երկեան՝ (ատամնաբոյժ) պատուական հայրեմակից մը, հաստատուած Նիւ Եորք:

ւոյ բաղը Տէր Գասպարի շուրջը հաւաքուած՝ գործի վրայ էր եւ ո՞վ պիտի յուզէր Աստուծոյ տանը մէջ տեսնել, քանի մը քար ունենալ՝ իր շալակովը կրուած: Տէր Գասպար անոնց օրինակ եւ առաջնորդ կը հանդիսանար իր ծերունազարդ հասակին մէջ, իր շալակը դարձնելով՝ քար մը տեղաւորելու համար:

Քարահանքը շատ հեռու չէր, դերեգմանոցի ճամբուն արեւելեան կողմը փորուած փոսի մը մէջ կար, քարերու խաւ մը ճերմակ, հարթ հաւասար, եւ բնութեան քիմիական սղոցովը հարթուած ու յղկուած սալաքարերու, — Է—Գ—Տ մասնաչափ թանձրութեամբ:

Քարահանք մըն ալ կար դերեգմանոցին արեւմտեան կողմը, քիչ մը հեռուն: Այս քարերը կը գործածուէին, բնականաբար, կիրի հետ, զոր իրենք կը պատրաստէին փողոցին մօտիկ այն տեղը, ուր յետոյ քահանային բնակութեան յարկաբաժինը շինուեցաւ: Կիրին քարը (կիրաքար) լաւ կը ճանչնային վարպետ քարտաշները, որմնադիրները: Անոնցմով հնոց մը կը պատրաստէին բոլորտիքը 15—20 ոտք տրամագիծով եւ 3—4 բարձրութեամբ, մէջտեղը կրակը կը վառէին, խոշոր դերաններ եւ ծառերու կոճղեր կը թափէին: Անոր մէջ ամէն բան կ'այրէր, նոյնիսկ շուրջի քարերը, որոնք կը ճարճատէին պայթիւններով: Կրակը կը մարէր եւ քարերը կը պաղէին եւ կիրի պաշարը պատրաստ կ'ըլլար արդէն: Սիւնեթի գործածութիւնը անձանօթ էր, բայց մեր հայրերուն պատրաստած կիրը չէր այն, ինչ որ վերջին տարիներուն սկսած էր երեւիլ: 25—30 տարի առաջ Ամերիկայի մէջ ալ կրակով պատրաստուած իկը կը գործածէին, ր լաւ էր իր տեսակին մէջ:

Տէր Գ. Քիւնյ. Ճղիւսան: Տէր Գրիգոր Զախճորի Ըզընը թաղէն էր: Հմուտ քահանայ կը նկատուէր այդ օրերուն համար: Ուղիղ կը կարգար ու կը հասկընար իր կարգացածը, կրնար արտայայտուիլ տօնական օրերուն, եթէ քարոզիչ վարդապետ կամ եպիսկոպոս ներկայ չգտնուէր եկեղեցին: Տէր Գրիգոր պարկեշտ, բարի եւ հայ եկեղեցւոյ աւանդութեան հաւատարիմ ու նախանձախնդիր քահանայ էր: Հեզ էր եւ առանց փառասիրութեան կ'արդարացնէր իր կոչումը: Մէկ ձեռքով կ'անէր իր ունեւոր ծուխերէն եւ միւս ձեռքով կարօտներուն կը բաժնէր: Աւետարանի պատուէրին անսալով, իր ձախ ձեռքը չէր գիտեր թէ աջը ինչ կ'ընէր:

Դեռ չեմ մոռցեր: Բողոքականութեան տակաւին նոր ծիւեր արձակած շրջանն էր: Երբ մենք այլեւս հասուն՝ դրաբարը աշխարհաբարի վերածելու չափ, Մէրարին տղուն՝ Անդրէաս Խոճեանի (ԱՔարեան) հետ Մեծ Պահոց Կիրակի օրերուն Եսայի մարդարէէն հատընտիր կտորներ թարգմանաբար այլ եզանակաւոր ժողովուրդին կը հրամցնէին, իւրաքանչիւրս կարգով ու յաջորդաբար: Օր մը եկեղեցւոյ արարողութիւններու աւարտումէն յետոյ, քաղցրութեամբ գիւս մէկ կողմ կանչեց եւ յորդորեց, որ դրաբարը աշխարհաբարի վերածելու փորձէն հրաժարէի:

— «Ձաւակս, շատ գեղեցիկ կերպով թարգմանութիւն կընես, այդ մասին ըսելիք չունիմ: Բայց մեր հայրերուն լեզուն թող որ իր ոճովը մնայ եկեղեցիին մէջ», եւ աւելցուց. «Լաւ կարգացողին բերնին մէջ դրաբարն ալ աշխարհաբարի չափ պարզ կը հնչէ ունկնդրողին եւ աւելի զօրաւոր ազդեցութիւն կը գործէ, քան աշխարհաբարի թարգմանութիւնը»:

Տէր Գրիգոր վերջին ծայր նախանձախնդիր էր եկեղեցւոյ աւանդութեանց, օրէնքներուն ու ծէսերուն պահպանումին նկատմամբ: Էջ մ'ունէր, կը

հեծնէր եւ ձեռքը շըխշըխով մը կը ճամբորդէր: Մայր Եկեղեցւոյ սպասար-
կութեան կը ծառայէր առաւօտ եւ իրիկուն հետեւողականօրէն: Վախճանեցաւ
1895-ի կոտորածէն մէկ երկու տարի առաջ:

Տ. Կարապետ Քհնյ. Մարաշլեան: Մեր օրերուն, դաւառի քահանաները
ունէին իրենց ծուխերը եւ անոնց տուրքերով միայն ապրուստը կը ճարէին,
ու Տունօրհնէքի, Ծնունդի, Մեռելաթաղի, Գերեզման-օրհնէքի եւ այլ առթիւ
նուէրներ ընդունելով: Ոմանք հարուստ ծուխեր ունէին եւ դո՛ւ էին իրենց վի-
ճակէն. ուրիշներ՝ աղքատ ծուխեր ունենալով, հազիւ թէ ապրուստ մը կըր-
նային ապահովել: Չկար եկեղեցական մարմին կամ հոգաբարձութիւն մը, որ
անոնց ամսականներ յատկացնելով իր վրայ վերցնէր անոնց ապրուստի հոգը:
Եկեղեցական տուրքերը կամաւոր էին:

Տէր Կարապետ Քահանան վեհանձն ու ազնիւ մարդ էր նաեւ. անօթի
մնալը կը նախընտրէր իր եղբայր եկեղեցականէն ծուխ մը դրաւելէն: Բայց
զաղտնիք չկայ, որ չյայտնուի: Օր մըն ալ լսեցինք, որ ուրիշներ իր ծուխին
մէկ մասը խլեր են իր ձեռքէն եւ ինք վերջին աստիճան չքաւոր կացութեան
մէջ է: Խնդիրը հասարակութեան դատաստանին յանձնուած էր եւ շատերու
բերնին ծամոց եղած: Յայտնապէս, Տէր Կարապետ Քահանան զրկուած էր,
եւ մեղադրանք կար ուրիշ քահանաներու դէմ:

Տէր Կարապետը տարիքով եւ աստիճանով՝ Տէր Գրիգոր քահանային կը
յաջորդէր Մայր Եկեղեցւոյ աջ դասուն վրայ:

Տ. Եղիշէ Քհնյ. Չիքսեան: Անոր սխալ կարգալը սովորական էր, բայց
ո՞վ կրնար օգնել: Չկայէն ինչ կարելի էր սպասել: Ժողովուրդին մէջէն լա-
ւազոյն մարդիկը չէին՝ այդ ասպարէզին համար, բայց եղածը այդ էր: Կային
ուրիշ կարող անձեր, որոնք չին ուզեր սքեմի տակ մտնել, ողջ գլուխնին Աւե-
տարանին տակը դնել, որովհետեւ քահանայագործութիւնը մուրացկանու-
թիւն ճանչցուած էր: Ընդհակառակը կային այնպիսիներ, որոնք հաց մը ճա-
րելու անընդունակ, այդ դաշտը կ'ընտրէին: Մեծերու, աղաներու կը դի-
մէին, ստորապրութիւն կը ժողուէին անձամբ եւ իրենց նպատակին կը յաջո-
ղէին հասնիլ:

Տէր Եղիշէ աղուոր շարական կ'ըսէր, քէֆէլին (անիւին) առջեւ քար
չէր գար, նոյնիսկ կարգացած ատեն, սխալը ոտքով կը կոխէր կ'անցնէր, ա-
ռանց կենալու, եւ ժողովուրդին մէջէն քիչերը միայն կը գիտնային կատա-
րուածը:

Մայր Եկեղեցւոյ ձախ թեւին վրայ կը կենար: Ծանուցում ընելու ատեն՝
նիւթը պարզելը սոկայի բան էր իրեն համար առ հասարակ, անոր համար
որ չզրուածը պիտի ըսէր: Ոսելու արուեստէն իրեն բաժին տրուած չէր. ին-
չո՞վ մեղադրել գինք: Խելօքիկ, անմե՛ղ մարդ էր:

Տ. Մկրտիչ Քհնյ. Թօփալեան (Կեմիօղլանեան): Չարձորի Ըգըր թա-
ղէն էր, Մայր Եկեղեցւոյ քահանայ, ձախ դասին վրայ: Շարականին ութ
ձայները մէկ ուղղութեամբ եւ գրեթէ մէկ մասնաւոր եղանակով կ'ընթանային
իրեն համար, թէեւ կը ջանար իրենց պատշաճ տեղը կապել զանոնք: Գոթախ-
տութիւն է առհասարակ քահանայի մը համար երգելու ընդունակութենէն
զուրկ ըլլալ: Իր ամբողջ ճիգը կը թափէր լաւազոյնը ընելու միշտ, մասնա-
ւորապէս Աւետարան կարգացած ատեն: Միջակ հասակով, կարմրտուն երես-
ներով չափաւոր ծանրութեամբ վայելուչ կազմ մը ունէր: Շատ գուարճալի
մարդ էր եւ իր շուրջ կենսուրախ ու շէն մթնոլորտ կը ստեղծէր: Երիտա-

սարգութիւնը իր շուրջ կը բոլորուէր եւ ինք դիտէր թէ որժան հետ կրնար կատակ ընել :

Իրեն համար հաւատքի զօրութիւնը ամէն բան էր : Կը պատմուէր ժողովուրդին կողմէ, թէ օր մը փայտով բեռցուած երկու իշու վրայ խաչակնքած եւ ճամբու դրած է զանոնք դէպի իր տունը, շուկայէն մինչեւ Զախճոր 4—5 մղոն հեռու, երբ ինք իր պաշտօնով չէր կրնար էջերը վարել : Զոյգ էջերը կ'երթան ու կը զանեն իրեն տունը : Կ'ըսուէր նաեւ թէ էջերը քիւրտ գիւղացիի էջեր էին, ճամբուն բոլորովին անվարժ, թէեւ այդ պատմումը հաստատող վաւերական որեւէ փաստ չկայ : Հարցը այն է, սակայն որ այս զրոյցը կար թէ՛ հայոց եւ թէ՛ թուրքերու մօտ : Այս վերջինները հայ հաւատացեալ ժողովուրդին պէս, զինք տուն կը կանչէին հիւանդի մը վրայ Աւետարան կարդալու, մանաւանդ թուրք կիները, որ վարժուէր էին ձեռքի տակէն լուր դրկել իրեն :

Տէր Մկրտիչ բազմազբաղ էր եւ ամէն տեղ : Ծուխի կողմանէ հարուստ, հացը իւղոտած էր արդէն : Պատահած է, որ ուշ մնալով ծուխին տունը պառկած է :

Տէր Հայեակ Քինյ . Ճէմնէմեան : Ֆարման թաղէն, երկար հասկով եւ նրբակազմ, աջ դասին վրայ կը կենար : Ունէր հասարակ այլ ուղիղ ընթերցանութիւն, արարողութեանց ու շարականի քիչ-չատ հմտութիւն : Ղեւնդ Եպս . Շիշմանեանէն ձեռնադրուեցաւ քահանայ, Տէր Գարեգինի հետ : Այդ ժամանակ կարող եկեղեցականի պէտքը շատ զգալի էր : Դժբախտաբար, կարող եղողն ալ յանձն չէր առնէր հոգեւորական պաշտօնին կապել ինքզինք : Թէրճանեան Սահակ Էֆ . ին դիմում ըրած էր եւ մերժուած : Ղեւնդ Եպս . Սերաստացի Յովհաննէս Թորոյեանին ալ առաջարկած է վարդապետ ըլլալ, որ այդ ատեն Մայր վարժարանի մէջ պաշտօն ստանձնած ըլլալով՝ լսարանական ժողովներ ալ կը սարքէ եղեր : Սակայն Թորոյեան եւս մերժած է : Ուստի Ղեւնդ Եպիսկոպոս կը դադրեցնէ լսարանական ժողովները, առարկելով թէ Կիրակի օրերը ժողովուրդը արդէն քարոզ կը լսէ, եւ ա՛յդ բաւական է : Թորոյեան տեղի կու տայ եւ քիչ ատենէն կը մեկնի Կիւրինէն :

Տէր Գարեգին Քահանայ : Մայր Եկեղեցոյ ձախ դասին վրայ կը կենար : Ղեւնդ Եպս . ձեռնադրեց զինք : Ուսեալ քահանայ էր եւ ուսուցչութիւն ալ ըրած, բայց չսիրուեցաւ ժողովուրդէն : Իր ձայնը պասօ էր, չէր կրնար բարձր աստիճանով երգել : Եթէ շարականը աջ դասէն սկսուէր եւ իր ձայնի տարողութեան աստիճանէն քիչ մը բարձր ըլլար, ստիպուած էր իր ձայնին շերել՝ իջեցնել : Ի հարկէ լսողին համար անախորժութիւն էր, մանաւանդ որ դոնէ ութ աստիճան վար ալ չէր իջներ որ զգալի չըլլար : Ուստի հարկ եղաւ Պատրիարքարան դրել : Հայաստանեայց Եկեղեցոյ քահանաները դիւրաւ չեն կրնար իրենց եկեղեցին ու ժողովուրդը թողուլ, կարծես թէ պսակուած ըլլան այդ եկեղեցոյ հետ : Վերջապէս Պատրիարքին հրամանով ու հրահանգով՝ մեկնեցաւ Պոլիս եւ ա՛յն կողմերը հաստատուեցաւ :

Տէր Ոնեսիմոս Քինյն . Յարգուարթեան : Տէր Ոնեսիմոս Զախճոր թաղին հոգեւոր կարիքը Տէր Յեսուի հետ կը մատակարարէր գոհացուցիչ կերպով : Տէր Ոնեսիմոս եթէ չունէր զբարբառի եւ քերականի հմտութիւն, բայց ունէր ժամանակի պահանջին գոհացում տալու կարողութիւն : Իր կարդացածին խելամուտ՝ կը քարոզէր այնչափ պերճաբան եւ իմաստալի՛ որքան իր հոգեւոր եղբայրը Տէր Յեսուն : Գեղեցիկ, ազատ ձայն ունէր եւ շարական ըսելու մէջ

գերագանց էր: Տ. Ոնեսիմոս ուրիշ առաւելութիւն մըն ալ ունէր, իր քաջութեան եւ պաղարիւնութեան շնորհիւ, ննջեցեալները թաղելու ատեն բնաւ չէր վախնար: Մինչդեռ Տէր Յեսու, ինչպէս կ'ըսէին շատեր, քիչ մը կը սոսկար, յատկապէս իր քահայութեան առաջին տարիները: Տէր Ոնեսիմոս մէկն էր այն բացառիկներէն, որոնք Փօշոնեան Յովհաննէս աղային հետ, ուժ տուած էին աղջկանց վարժարանին եւ իբրեւ դասախօս քանի մը տարի մատուցած էր իր ծառայութիւնը: Կրթութիւնը տաւնէն կը սկսի. դաստիարակուած մայր մը պէտք է հայ տաւնէն ներս. այս էր իր վարդապետութիւնը աղջկանց վարժարանէն ներս:

Տէր Իգնատիոս Գինյ. Բանեան: Մանուկ վարպետին մէկ հատիկ մանչ գաւազն էր Սահակ, որ երեք քոյր ունէր: Մանուկ էմմին արհեստով որմնագիր, քար տաշող, համբաւաւոր էր իր խօսած առարկներուն համար: Ամէն մէկ բացատրութեան անպատճառ առակ մը ունէր կցելիք: Առանց փափկանկատութեան իր բերնէն դուրս կը սպրդէին աղէկին ու լուրջին հաւասար վասն ու ծիծաղելին: Բայց ես չեմ գիտեր պարագայ մը, ուր անոր խօսքերէն ու կատարած նմանութիւններէն ցաւ զգար մէկը:

Մանուկ էմմին իր երեք եղբայրներուն մէջ քչիկ մը կարգալ սորվեր էր: Աւետարանը եւ Սաղմօսը կը կարդար, բայց երկար բառերուն առջեւ կանգ առնելով եւ բառին առաջին վանկը հեզելով կը գտնէր բառը: Ժամագիրքէն ալ շատ բան դոց գիտէր, եւ ինքզինք իր գիտցածէն աւելի կը ներկայացնէր միշտ: Իր որդին Սահակն ալ մանկութենէն նուիրուած էր եկեղեցիին: Տիրացութիւն կ'ընէր: Մանուկ էմմին ուր որ նստէր՝ կը խօսէր Սահակի մասին ու կ'ըսէր. «Մեր Սահակը պիւթիւնը (բոլորը) գիտէ»: Այս գնահատանքը Սահակին վրայ շատ լաւ տպաւորութիւն թողած էր. կարծես թէ սիրահարուած էր եկեղեցիին եւ անոր սպասարկութեան:

1890-ի ատենները նոր ազանդ մը հրապարակ ելաւ Հիւլիւլիւ անունով: Ասոնք խումբ մը այրեր ու կիներ էին որ փոխնիփոխ տուներու մէջ հաւաքուելով կ'աղօթէին ու կ'երգէին: Հայ Առաքելական Եկեղեցւոյ դաւանանքին ու հաստատման հակառակ ոչինչ ունէին. միայն թէ օրական երկու անգամուայ աղօթքէն դուրս չմնալով, երբորդ պատեհութիւն մըն ալ կը ստեղծէին իրենցմէ մէկուն տան մէջ: Սահակ ժամանակ մը անոնց հետ էր:

Ժողովուրդը լսած էր անոնց մասին եւ ոմանք բացատրութիւններ կու տային հիւլիւլիւ բառին շուրջ, առանց որոշ հասկացողութեան: Զէյթունցի Հաճի Կարապետը, իրենց առաջնորդներէն մէկը, անունով ծանօթ՝ բայց դէմքով անծանօթ կը մնար շատերուն: Եղելութիւնը հասած էր մինչեւ Տէր Գասպարին, որ Տէր Յեսուի պատուերէր էր, երթալ եւ անոնց հաւաքոյթին ներկայ գտնուիլ: Տէր Յեսու անպատշաճ բան մը գտած չէր հոն:

Սահակ նշանուած էր եւ 1895-ի արհաւիրքներէն անմիջապէս յետոյ ամուսնացաւ, ինչպէս շատ ուրիշներ, առանց փառաւոր հարսանեկան արարողութեան՝ հարիւր փարա տուրքով մը միայն: Զինք ճանչցողները թելադրեցին եւ իրենց քուէն տալով ստիպեցին, որ քահանայ ձեռնադրուի: Սահակ Սեբաստիոյ Պետրոս Եպիսկոպոսէն ձեռնադրուեցաւ Տէր Աղբէի հետ եւ կոչուեցաւ Տէր Իգնատիոս:

Ահաւասիկ «հիւլիւլիւ» ազանդին երգերէն մէկը:

Երկինքէն վեր ունիմ մի յայս,
Հոն է իմ Տէր Արարիչ լայս,

Իր անունն է փրկիչ Յիսուս,
Կը փափաքիմ երթալ տեսնել:

Զկայ ոչ սուգ, ոչ տրտմութիւն,
Անցաւ երկրի մեծ նեղութիւն,
Այնտեղ կ'ըլլայ միշտ խնդութիւն,
Կը փափաքիմ երթալ տեսնել:

Դռունք ունի երկուտասան,
Հոն կը բազմի սիրոյ փեսան,
Ինքն է Աստուած միշտ անասան,
Կը փափաքիմ երթալ տեսնել:

Հեղինակ՝ Զէյթունցի Մանուկ Վարժապետն

Տէր Ազդէ: Տէր Աղղէի մասին չունիմ ծանօթութիւն, միայն լսած եմ թէ ուսուցչութիւն ըրած էր Էօրէն թաղը եւ ունէր կարողութիւն: Իր մասին մեծ գովեստով կը խօսէին համաշխարհային պատերազմի օրերուն տարագրուած եւ վերապրող հայրենակիցներ:

Տէր Իգնատիոս եւ Տէր Աղղէ երկուքն ալ Մայր Եկեղեցւոյ քահանայներէն էին 1895 կոտորածէն յետոյ:

ԿՐԹԱԿԱՆ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

Մեր պապերուն օրով կանոնաւոր դպրոց չկայ եղեր եւ կարգալ ու գրել գիտցողներ մատի վրայ կը համբուէին: Մէկը իր գաւկին, ուրիշ մը իր սանուկին, երրորդ մը իր աշկերտին եւ կամ իր բարեկամին տղուն դաս կու տայ եղեր՝ իր սան մէջ կամ գործած տեղը:

Հայ ժողովուրդը, որ իր ազատութիւնը վաղուց կորսնցուցած էր, բնականաբար ուսմունքէ ալ զրկուած պիտի մնար: Կիւրիին հայութիւնը, որ իր ոտքին տակ կռուան մը գտնելու եւ իր ապրուստը ապահովելու հողերով տաքուած էր, չէր կրնար երկրորդական պէտքերու մասին խորհիլ:

Երբ մենք աչքերնիս բացինք, տեսանք մարդիկ խոշոր կազմով եւ երկար մօրուքով մարդիկ, որոնք Եկեղեցւոյ գրակալին վրայ զետեղուած մեծ գիրքը կը կարդային: Տէր Գասպարը, Ճղլենց Տէր Գրիգորը, որ Ըզրըր մանլան կը բնակէր, Մայր Եկեղեցւոյ կապուած էր եւ Տէր Թորոս քահանայ Մալճեանը, ասոնք գոնէ առանց սայթաքելու կրնային կարգալ եւ քիչ մըն ալ, քարոզել: Անտարակոյս կարգացողներ կային աշխարհականներու մէջ ալ, ինչպէս Գօշուհեան Ալեքսան աղան⁽¹⁾, որ կառավարութեան մօտ բաւական

(1) Ալեքսան աղային ազգասիրութիւնը սա պատմութեան հետ կապուած է, գոր դրուատելով կը խօսէին: Աղայութեան տարին Հայերը ժողով կը գումարեն անօթիներուն օգնելու համար: Յորեմը մեծ քանակութեամբ դիզուած է Աքիֆ աղային ամբարը եւ այն շատ սուգ շին կ'ուզէ: Ալեքսան աղան կը կանգնի եւ կը պատուիրէ չփառանքներուն, այր քէ կին, որ յաջորդ օրը Բէթէն չայիւրէն անցած ատենը յարձակին իր վրայ ու ծեծեն զինք: Եւ այդպէս կ'ըլլայ. ինք վերջապէս գլխարկը կորուսած ու կոճակները փրքած վիճակի մէջ կառավարութեան դուռը ափ կ'առնէ եւ հարցութեամբ կը սկսի. «Ո՞վ ծեծեց քեզ»: Ալեքսան աղան կը պատասխամէ. «Տէր իմ, շատուր էին, յանկարծ վրաս հասան եւ ես շուարած, անոնց հարուածին տակ գետին ինկայ. հաց կ'ուզեմ, Տէր իմ, անօթի եմ»: Կառավարութիւնը, քիչ մը խորհրդակցելէ յետոյ, ձեռքի տակէ հրաման կ'ընէ, որ ժողովուրդը ամբարին դուռը կոտրէ եւ վերցնէ մաս մը: Եւ միայն ուշ ատեն զինուոր կը հասնի:

կշիռ ունի եղեր : Անոնց սորվեցնող մը եղած է անշուշտ , թերեւս ոչ դպրոցական յարկի տակ , բայց զոնէ տուներու մէջ մեծէն փոքրին անցած է հայ լեզուին ուսուցումը : Իբրեւ վարժապետ՝ ամենահինը , Գասպար Խալֆէն է , 1820-ին : Մեր ուսանողութեան ատեն ալ այդ բառին գործածութիւնը սովորական էր : Այսուհետեւ պիտի հանդիպինք անոր :

Գասպար Խալֆէին նկատմամբ մեծ գովեստներ կը շնայէին : Կ'ըսուի թէ Տէր Գասպարը իր աշակերտութեան օրերուն , քերական , սաղմոս , աւետարան կարգալէ յետոյ , երբ կարողը կու գայ Նարեկին՝ իր վարժապետին կը հարցնէ պարծանքով մը , «Նարեկէն վերջ ալ կարդալիք կա՞յ» . եւ պատասխան կը ստանայ ,— «Նարեկը կարդալէ յետոյ դեռ նոր պիտի տեսնես քէ բնաւ քան շես գիտեր» : Գասպար Խալֆէն եղած ըլլալու է այդ վարժապետը՝ իբրեւ թէ :

Կակոսեան Մանուկ վարժապետ : Մեր հայրերու օրով , անցեալ դարուն , Մանուկ վարժապետ կակոսեան առաջին անգամ Կիւրիինի մէջ հայ լեզուի դասաւանդութիւնն ըրած է , եւ կարող ու ձեռնհաս ուսուցիչ մը ըլլալը ամէն կասկածէ վեր է : Մեր հայրերը մեծ յարգանքով կը յիշէին զինք :

Իր սորվեցնելու եղանակը բնականաբար չենք կրնար համեմատել արդի մանկավարժութեան հետ : Ֆալախան շարերուն ու ծոյլերուն համար անհրաժեշտութիւն մըն էր : Մեր օրով ալ գործածութեան մէջ էր ան , հետեւաբար Փալախայի անունը պէտք չէ համարել դատաստարտութիւնը անցեալի ուսուցչութեան , այլ ժամանակին :

Իր աշակերտներն են՝ Մարանեան Յարութիւն աղան , Անթիքաճեան Խաչեր ամուն , որ պղտիկներուն դաս կու տար , եւ տարեկերէնի մէջ դեղազիրի համբաւ հանած էր : Մանուկ վարժապետի ամենէն կարող աշակերտներէն եղած են՝ Ժամկոչեան Յակոբ վարժապետը՝ Խասապալ թաղէն եւ Եփրեմեան Յակոբ վարժապետը՝ Շուղուլէն : Հաղիւ կը յիշեմ անոնց ուսուցչութիւնը իրենց վերջին օրերուն :

Կակոսեան հեղինակած է «Ճանապարհ Երկնից» գիրքը , որ միջին ծաւալ ունէր եւ ժողովրդական լեզուով գրուած : Ունէր նաեւ համառօտ Աշխարհագրութիւն մը , շատ փոքր ծաւալով , ուր ոչ քարտէս կար , եւ ոչ ալ գիտական տեղեկութիւններ կային , այլ՝ պարզ , համառօտ ծանօթութիւններ միայն , հեռաւոր ժողովուրդներու վարքէն ու բարքէն , մասնաւորապէս Ասիոյ խորերը բնակող ցեղերու մասին :

Մանուկ վարժապետը Մայր Եկեղեցւոյ բակին ձախ կողմը կը հանդէպէր , ուր խաղողի որթատունկներ կային պահարանին մօտիկ :

Յակոբ վարժապետ Ժամկոչեան .— Հաղիւ կը յիշեմ իր դասաւանդութիւնը : Ժամկոչեան Խասապալ կը բնակէր , Ժամկոչ Գրիգորին եղբայրն էր : Կուռնելիոսը իր հօրը յաջորդեց Ժամկոչութեան գործին մէջ , անոր մեռնելէն ետք : Ժամկոչեան վարժապետին համար կ'ըսեն թէ բարի եւ աստուածափախ մէկն էր : Թէ որչափ Ժամանակ պաշտօն վարած էր՝ դժուար է ըսել : Կիւրինցիները սովորաբար դուրսէն վարժապետ կը վարձէին :

Յակոբ վարժապետ Եփրեմեան .— Նոյնպէս՝ տարիքը առած մարդ էր . Շուղուլին թաղը դասաւանդութիւն ըրած ըլլալու է : Վերջին անգամ ըլլալով՝ քանի մը ամիս Մայր Եկեղեցւոյ վարժարանը պաշտօնավարեց : Ձինք շատ քիչ կը յիշեմ : Կ'ըսէին թէ խիստ մարդ էր եւ թէ իր աշակերտները անխնայ կը ծեծէր :

Պատուելի Պթիկեան (Գիշերօթիկ) : Լուսաւորչականներուն մէջ Պատուելի կոչուիլը բացառիկ էր ուսուցչի համար : Գիշերօթիկ Պատուելի կը կոչէին զինք : Մարանեան Յարութիւն աղան բերել տուած եւ իբրեւ իր տան մէկ անդամը պահած է զայն : Պթիկեան (ըստ ոմանց Պետիկեան) նշանաւոր մարդ էր թէ իբրեւ հայկարան եւ թէ իբրեւ բժիշկ : Հայերէնէ զատ ուրիշ լեզու չէր գիտեր, բայց կարող դասախօս համարուած էր, մանաւանդ գրաբարի մէջ : Երջան մը ան բեմ կ'ելլէր եւ եկեղեցւոյ դասէն ժողովուրդին կը քարոզէր : Իր խօսքերը աւելի բարոյագիտական էին, յոյն իմաստասիրութեան եւ քրիստոնէականկրօնի աղղեցութեան տակ : Ան իր աշակերտներուն Թեսալոնսէն թարգմանութեան դասեր կու տար՝ գրաբարէ աշխարհաբար : Ժողովուրդը զինք կը ճանչնար իբրեւ գիտնական, ու երբէք լսած չեմ որ իր խօսքերը լեծբծէին : Երբեմն ալ Կիրակի օրերը դպրոցի շրջապատերէն ներս դասախօսութիւններ կ'ընէր ժողովուրդին, հին դպրոցի վարի յարկը, զոր տէվիլիք կը կոչէին ոմանք եւ ուր մեծ բազմութիւն մը, մինչեւ 4-500 հոգիի հասնող՝ ներկայ կ'ըլլային հաւաքոյթին : Կ'ըսէին թէ Խրիմեան Հայրիկին մօտէն ծանօթ եղած է : Վանեցի էր :

Բաւական թիւով աշակերտներ հասցուցած է, ինչպէս Մարանեան Ենովք աղան, Թերճանեաններէն Ամբակումը եւ Յարութիւնը, Քիւրքեաններէն Յարութիւնն ու Մատթէոս աղաները, եւայլն :

Սովորութիւն եղեր էր, որ ուրիշ դպրոցէ ելնողները մէկ երկու տարի Գրաբարի եւ Քերականութեան դասեր առնէին, մանաւանդ նշան վարժապետ Զատրճեանի աշակերտներէն : Ասոնցմէ էին՝ Մերարին աղան, Կտլոզեան Ղազար (Սուրէն Սուրէնեան) նախ քան Մարգուանի Գոլէճը երթալը : Էճիլէնեան Կարպօ վարժապետը, որ նախ էօրէն թաղը եւ ապա Մայր վարժարանը կը դասախօսէր՝ Պատուելիին աշակերտած էր :

Ան եկեղեցի կու գար Կիրակի առաւօտները, դրեթէ առանց բացառութեան եւ շատ անգամ Ծաբաթ իրիկուններն ալ, բայց սովորաբար նախառօնակի չէր սպասեր : 1891-ին Երուսաղէմ գնաց ան, այդ կէսօրին աչքէս չվրիպեցաւ, եկեղեցւոյ մուտքին աջ կողմի քարը համբուրեց հաւատացեալի մը պէս : Անոր մօրուքը ալեխառն էր, աւելի ճերմակ քան թէ սեւ :

Պատուելին վերջին ծայր հմուտ մարդ էր եւ ծանօթ բուսական դեղերու : Ծատ անգամ բժիշկներու դարմանել չկրցածը ինք աղատած էր : Չսիրած մարդոցմէ կը խորչէր եւ կը խուսափէր անոնցմէ : Բնականաբար այդպիսիները զինք չէին սիրեր եւ սակայն ամէն զոհողութիւն կ'ընէին զինք շահելու, մանաւանդ տաճիկները, որոնցմէ խոյս տալու համար իր պատճառն ունէր, «Կառավարութենէն վաւերացեալ բժիշկ չըլլալով», պատասխանատուութենէ կը վախնար, ենթադրելով որ կրնայ օր մը մահ պատահիլ» : Այս երեւոյթէն մեկնելով կառավարութիւնը արտօնադիր տուաւ իրեն, որմէ յետոյ, կարծեմ կանոնաւոր կերպով շարունակեց իր այցելութիւնը հիւանդներուն : 1895-ի կոտորածին թուրքերը խնայած էին իրեն :

Տէմիրճեան Վարդան եւ Համբարձում.— Երկուքն ալ երիտասարդ էին : Վարդանին համար դովեստով կը խօսէին, առաւելապէս հաշուակալութեան մէջ հմուտ էր, դիտէր նաեւ թուրքերէն : Ժամանակ մը Եաշթէփէ դասաւանդեց : Համբարձումը միշտ Զախճորի դպրոցը ուսուցիչ էր՝ թէ կոտորածէն առաջ եւ թէ յետոյ, մինչեւ համաշխարհային պատերազմը, երբ հաղարաւոր հայ մտաւորականներու հետ, իր կեանքն ալ խզուեցաւ աքսորի եւ ջարդի սարսափին մէջ : Տէր Յեսուն քահանայ էր արդէն, եւ կոտորածէն յետոյ դիմած

էր Թօփալեան տան, որ բարերար դեր կատարեց մասնաւորապէս դպրոցներու համար: Գոչունեան Տիգրանը, Սանասարեան վարժարանէն (էրզրումի) դարձած էր եւ դասերու բաժանումն եղաւ Տէր Յեսուէ տնօրէնութեամբ: Ուսուցիչներն էին Գոչունեան Վ., Հ. Տէմիրճեաններ եւ Յ. Բանեան, որ մէկ տարի միայն մնալով՝ մեկնեցաւ Ամերիկա:

Միւրեմ Գոչունեան, Գոչունեանց Ալեքսանին հինգ որդիներէն մէկն էր: Արապենց քով էր իրենց տունը: Միւս որդին՝ Տիգրանը, Սանասարեանի ընթացաւարտ՝ դարձած էր երկիր: Համակրելի երիտասարդ էր, հեղ բնաւորութեամբ եւ Սանասարեանէ ստացած մէթոտով կու տար պատմութիւն եւ շարադրութիւն. ունէր գեղեցիկ ոճ: Ասոնք մնացին եւ իրենց ծննդավայրի նոր սերունդին դասաւանդեցին 20 տարուան վաստակի ու կեանքի զոհողութեամբ, միւսներէն աւելի, որոնք իրենց դոյութիւնը պահպանելու համար օտար աշխարհ մեկնեցան եւ թունաւորեցին իրենց կեանքը օտարութեան մէջ:

Աշխարհը շատ ընդարձակ էր, այնչափ ընդարձակ՝ որ իրեն համար ալ կարծես լայն տեղ կը խոստանար. լսած էր որ բարձր ուսմունք ստանալու եւ կամ մեծ վարժապետ դառնալու համար պէտք էր ծննդավայրէն դուրս նետուիլ, ուր գոլէճներ կային, ինչպէս Մարգուան եւ Խարբերդ, եւ կրթական անուանի հաստատութիւններ: Էրզրումի մէջ էր բարերար եւ անմահ Սանասարեանի վարժարանը անոնց համար, որ կը խրոչէին Բողոքական անունէն:

Եթէ մէկը ունէր յառաջագէժ գաւակ մը, որ կը փայլէր դպրոցին մէջ, կը զրկէր զինք Խարբերդ կամ Մարգուան, որ բարձրագոյն զարգացում ստանար Ամերիկեան գոլէճներուն մէջ: Մենք այն ատեն տեսանք Մարգուանի Գոլէճէն շրջանաւարտ Ս. Սուրէնեանը, որ վերադարձեր էր Կիւրին եւ Մայր Եկեղեցիի վարժարանին մէջ կը դասաւանդէր:

Խարբերդի Գոլէճը յաճախեցին Տիգրան եւ Գէորդ Հալաճեանները եւ իրենց եղբորորդին, ապա Օրդ. Էլմա Աղազարեան: Սանասարեան վարժարանը յաճախեց Տիգրան Գոչունեան, որ վերադարձաւ յետագային եւ պաշտօն ստանձնեց Չախճորի վարժարանը:

Այդ ժամանակ կարող կղերականի պակասը զգալի էր. քահանաներու մէջ կային այնպիսիներ, որոնք Աւետարանը կարդալու ատեն, ո՛չ իրենք կը հասկնային կարդացածին, եւ ո՛չ ալ լսողները:

Միսի Կաթողիկոսը, Մկրտիչ Քէյֆօսիդեան, քանի մը տարի առաջ եկած էր Կիւրին եւ նշմարած այս պակասը: Տէր Յեսուէ Վարդապետեան եւ Տէր Ոնեսիմոս Յարզուարթեան քահանաները ճիշդ ժամանակին կը հասնէին իրենց պաշտօնին գլուխը, ուսեալ եւ բանիմաց եկեղեցականներ կ'անցնէին հովուելու հօտը: Պէտք էր նորերէն պատրաստել աւելի կարող կղերներ: Եւ կ'որոշուի որ երկու հոգի զրկեն Միսի Միաբանութեան դպրոցը: Մէկը կ'ըլլայ Մայր վարժարանէն Մատթէոս Անթիքաճեան, որ փայլուն, աշխոյժ աշակերտն էր Նշան Վ. Չատրճեանի եւ էր նաեւ ձայնաւոր ու սարկաւազ, իսկ միւսը՝ Ալօղլանեան (Սորէն Եպս. Դիմաքոսեան) հովիւ Օհանին տղան, Չախճորի վերի թաղէն: Այս ալ յաջող եւ վերջին ծայր ուշիմ աշակերտ մըն էր Չախճորի վարժարանէն, գեղեցիկ ձայն ունէր եւ այդ օրերուն եկեղեցւոյ արարողութեան մէջ, իբրեւ տիրացու եւ սարկաւազ, իր բաժինը ունէր:

Խասպաղ Թաղին վարժարանը: Խասպաղ թաղին մէջ կար վարժարան մը, ուր երթալու համար պէտք էր շեղիլ պողոտայէն, որ կ'իջնէր Տէր Աբրահամեանց Եօզուշէն: Անմիջապէս հետեւելով ձախի վրայ հոսուն առուին, եւ ա-

սոր եզերքի նեղլիկ ուղիէն քալելով, քանի մը վայրկեանէն կարելի էր հասնել հոն: Առուին եզերքը իբրեւ հովանի բարձրացած էին բարտիններ: Հաճելի էր ինձ այդ ճամբով երթալ եւ հանդիպել, Մինասեանի բնակարանին, վայրէջքին միայ, որ Մինասենց փողոց կը կոչէին:

Զգօնեանը սիրուեցաւ եւ դարձաւ անուանի: Աղբայրն արթնութեան օրերն էին եւ ազատադրութեան ոգին տակաւ կը ծաւալէր, խորապէս դադարն էր: Մինասեան, ինքն ալ ազատական ըլլալով, կը քաջալերէր շարժումը, ինք յատկապէս նուիրուած ըլլալով գպրոցի հոգարարձական աշխատանքներուն:

Զգօնեանի մասին յատակ գաղափար մը տալու համար յարմար կը սեպեմ հետեւեալը արտագրել յօդուածէ մը, որ երեւցած էր Արաքս թերթին մէջ.

«Պապը Ալիի ցոյցը տեղի ունեցաւ 1895 Սեպտ. 18-ին: Այդ օրերուն Զէյթունցի Մանուկ Զգօնեան վարժապետը՝ կեղծանունով Համբարձում Գէորգեան կը գրէ. «Տեսէ՛ք Ազաւնի» խորագրեալ ոտանաւորը զոր աշակերտ մը, պարզեւարաշխութեան հանդէսի մը մէջ կ'արտասանէ: Մինասեան շատ կ'աղբուր գրուածքէն, եւ ըլլալով հոգբարձու՝ կ'առնէ դրուածքը ու Պոլիս կը շրկէ «Մամուլ» շաբաթաթերթին, ուր կը տպուի ան: Հետապնդուելով թրքական գրաքննութեան կողմէ, թերթին տնօրէնը, Այվազեան Գէորգէ Էֆէնտի, հինգ տարուան բերդարգելութեան կը դատապարտուի: Մինասեանը եւ ուրիշներ կը ձերբակալուին եւ Սերաստիոյ բանար կը քշուին: Յետագային կաշառքով կ'ազատին: Զգօնեան 40 օր որբեւայրի կնոջ մը տունը կը պատասպարուի: Նամակ կը գրէ Զէյթուն, պատմելով իրողութիւնը: Ծուռով քաջեր կու գան եւ զինք կը փոխադրեն Զէյթուն»:

Զգօնեան 1871-ին մտած է ժառանգաւորաց Վարժարանը ուրիշ ինը աշակերտներու հետ: Մնացած է հոն մինչեւ 1877 թուականը: Քիչ անց կը հեռանաւ: Բժիշկներու խորհուրդով կը մեկնի հայրենիք: Հոն կը մնայ քանի մը տարի: Կը դասուանդէ Սբ. Յովհաննու վարժարանին մէջ: Յետոյ կ'անցնի մերձակայ Շարբուզ գիւղը, նոյն պաշտօնով: Հոս կը լծուի նաեւ մաւհապէթնի քրիստոնէական աղանդի մը, հատուածական աշխատանքին: Ան կ'իլիկիոյ մէջ երեւան եկած էր ձէնանեան Ղեւոնդ քահանայի գլխաւորութեամբ: Զգօնեան կրօնական տաղեր կը հիւսէ, իր առօրեայ աշխատանքներէն դուրս, եւ զանոնք երգել կու տայ Եղիսաբէթ անունով գեղեցիկ ու քաղցրաձայն որբեւայրիի մը: Ծնորհիւ այս ճիւղերուն օրէ օր նորընծայ հաւատացեալներու թիւը կը բազմապատկուի գիւղին մէջ: Անոնք կը բաղկանային մեծամասնութեամբ թուրք խալմներէ, որոնք Զէյթուն կը բերուէին եւ կը մկրտուէին հանդիսաւոր թափօրներով կառավարութեան քթին տակ:

Մատթէոս Վարդապետ: Եղած է ատեն մը, երբ Կիւրիսի հայերը իրաւունք չեն ունեցած ձի կամ էջ հեծնել: Էջ հեծնելը աւելի կանուխէն սովորական եղած է քան ձի հեծնելը: Սակայն, էջ նստած հայը պէտք էր որ մասնաւորաբար թուրքերու փողոցէն ու դռնէն անցնելու ատեն՝ վար իջնէր ու քալէր աւանակին հետ, իբրեւ յարգանքի նշան թուրքերուն: Տէր Գասպար քահանան իր յանդգնութեան կցած է նաեւ ուժը, «անոր կռնակը գետին բերաղ չէ եղած», կ'ըսէին եւ առանց իշու քամակէն իջնելու շարունակած է իր ճամբան, հայերուն մէջ միակ բացառութիւն ըլլալով: Տէր Աբրահամենց Եօյսալ շիւ տակը մէկն է եղած այդ փորձանաւոր վայրերէն: Տէր Գասպարին լաւ աչքով չեն նայիր եւ ոչ ալ կրնան անոր հետ չափուիլ: Սակայն մէկ հոգիի ան-

վախութիւնը ամբողջ ժողովուրդին չի վերազրուիր եւ մեր հայրերը հաւկիթին ու կեղեւին մէջտեղը նեղ օրեր կ'ապրին: Եւ ահա Կայսերական հրովարտակով Կիւրին կը հասնի Մատթէոս Վարդապետ Պոլիսէն: Անոր ժամանած պահուն, Ղալան կը փլի, եւ այդ տարերային դիպուածը յիշատակելի թուական մը կ'ըլլայ ժողովուրդին խօսակցութեան մէջ, թուրքին ու հայուն մօտ հաւասարապէս, բոլորովին տարբեր մեկնութեամբ: Մատթէոս Վարդապետ՝ կատարած թուրքերէն չորս հոգի շղթայակապ՝ իրեն հետ կը տանի Պոլիս, ուրկէ այլեւս չեն վերադառնար անոնք:

Մատթէոս Վարդապետին Կիւրին ժամանելը կապ ունի ժողովուրդի ծոցէն փրթած արդար բողոքին հետ, որ ժամանակակից զրիչի մը կողմէ հաղորդուած է Պոլսոյ Պատրիարքութեան, 1895-ի կոտորածին առիթով: Պատժութեան վաւերականութիւնը կասկածէ վեր է: Մեր մանկութեան՝ օրերուն ժողովուրդին բերանէն կը լսէինք դէպքին նուիրուած երգը (տէսքան)ը, որուն հեղինակն էր ձգլեց Սեֆօ Էմմին, եղբայրը Տէր Գրիգոր քահանային: Ասոնք երկուքն ալ տարէց էին եւ ժամանակակից Տէր Գոսպարին:

Սեֆօ Էմմին: Սեքօ էմմին ժողովրդային բանահիւս էր, երկու աչքէն կոյր, յաղթանդամ եւ քաջատղջ: Տարուան հինգ տաղաւարներուն, մասնաւորապէս Ծնունդին եւ Չատիին, անպայման երկու շարաթ ծոմ պահելէն ետք, մէկու մը առաջնորդութեամբ եկեղեցի կու դար ու կը հաղորդուէր: Մեծ պահքին ծոմ պահելը սովորութիւն էր, ոմանք մինչեւ կէսօր, ոմանք՝ մինչեւ իրիկուն, քիչեր՝ շարաթ մը լման: Այս վերջինները կը սկարանային եւ բոլորովին կ'իջնային ուժէ: Ասոնց կարգին կը գտնուէին նաեւ նազելի օրիորդներ, երագներով լեցուն: Ասոնք կը ջանային խարել իրենց շուրջինները նուէրներ կորզելու յոյսով: Այցելութեան կու գային դրացիներ ու բարեկամներ՝ դանոնք վարձատրելու:

Վարդօ Խճէեանէն առնելով հոս կ'ընդօրինակեմ Սեքօ էմմիի ոտանաւորներէն քանի մը հատ, որոնք զաղափար մը կու տան այդ ժամանակի մտայնութեան մասին:

Այս աշխարհքս բանի չի գար,
Մենձ եմ տէյի բան մ'ըլլար,
Թէ որ փարան բանի ըլլար՝
Սողմոն իմաստունը կ'ըլլար:

Այս աշխարհքս մարդ չի մնար
Առաջնիդ վառեցէք ֆենար
Չմեռնելուն գտնուէր հնար՝
Սողմոնը կը գիտնար:

Հարուստներն ալ իրար ամուր կը սիրեն
Տաւէթ⁽¹⁾ կ'ընեն, մէկգմէկը կը բերեն.
Թափսուն⁽²⁾ խոշորը անունը առջեւ կը դնեն,
Փոխարէնն ալ տրտունջ կ'ընեն պիտ ասեմ:

Տաւէթ շատ ընդունի, կ'ըսեմ կոր ձեզի՛,
Այդ իւրին մեղք կ'ըլլայ՝ շահ չ'ըներ ձեզի.

(1) Խնոյճ, հիւրասիրութիւն: (2) Ափս, սեծ պնակ:

«Կերակուրն աղփատաց» ըսեր են մեզի
Աւետարանին *զըթթը*⁽³⁾ կը պահեն պիտի ասեմ :

Իրարու քով կու գան *ղով զայսպէթ*⁽⁴⁾ կ'ընեն,
«Յանցանքը քուկդ է» ով զիրար կ'անայատուեն,
Իշխաններուն *սիրազն*⁽⁵⁾ ալ բուրքերուն հետ են
«Խօսքերն չի քալելը անկից է», պիտ' ասեմ :

Մեր Կուռինը *չէպն*⁽⁶⁾ ու շէքերը մէկ է
Ջուրը *սէրթ* ըլլալուն մարդիկը *թէօք*⁽⁷⁾ են,
Արապենց Իթոն ալ աղփատին հետ է,
«Իշխաններն ալ պարապ խօսին», պիտ' ասեմ :

Ղութնին ու զումաշը⁽⁸⁾ պարտնով կը հագնին
Պատնով հագնողները բարով չի հագնին,
Խոշոր խոշոր *փիւսկիւլ* կախեն տղաքներն
Մարուսխանէն⁽⁹⁾ կը մղտուեն, պիտ' ասեմ :

Խուցը կը հաւաքուին ամուր կը պոռան
Մանրքին մեծին *պեղլի*⁽¹⁰⁾ չէ *սըրան*⁽¹¹⁾
Սալիանին գայ նը քրդումնուն վրան,
«Չենք արժեք ըսելով կ'իյնան» պիտ' ասեմ :

Եկէ՛ք, որ աղբրտիք ձեզի բան ըսեմ,
Մատթէոսին վրայօքը պիտ' խօսիմ,
Թուրքերուն համար շատ ըսելիք ունիմ,
«Բայց Աստուծոյ մեծ փառք տանք» պիտ' ասեմ :

Կուռինը մտաւ նը *ղալան*⁽¹²⁾ ալ փլաւ,
Կուռնայ թուրքը հայէն անլի վախցաւ,
Ֆէքթուի աղան ալ, որ կը փորէր *ղուլի*⁽¹³⁾
Տէր Գասպարն ալ մէջը ձգէր պիտ ասեմ :

Եթէ չգար նէ շատ գէշ բան կ'ըլլար,
Ալ *անընցէ*⁽¹⁴⁾ հասնիլ անգամ չէր ըլլար,
Տէր Գասպարի տունն ալ շատ արին կ'ըլլար,
«Անկէց վերջ ապրածը էվէլ», պիտ' ասեմ :

Առաջնորդարանը Մատթէոս բազմեցաւ,
Արտ պենց Իթոն ալ ոտքի կանգնեցաւ
Կուռինի Հայերուն արեւ ծագեցաւ,
«Թուրքերուն ալ սիրտը խախտեցաւ», պիտ' ասեմ :

Մատթէոս վարդապետ Կուռինը եկաւ,
Հայերուն համար մեծ բարիք եղաւ,
Վարդապետ ու տէրտէր ազօթող եղան,
«Աստուած Մատթէոսին շատ օր տայ» պիտ' ասեմ :

(3) Հակառակը: (4) Բանբասանք: (5) Ոմանք, մաս մը: (6) Պագլիդ: (7) Դեգ, պինդ
զուլիս: (8) Կերպասներ (9) Բանտը կ'աղտոտեն: (10) Յայտնի, որոշ: (11) Կարգը շարքը:
(12) Բերդը: (13) Ջրհոր: (14) Անամկ:

Ղեւանդ Եպս. Շիշմանեան: 1881-ի ատենները ան կու գայ Կիւրիին եւ կը ստանձնէ Առաջնորդի պաշտօնը: Այդ շրջանին Ապառիւլ աղային տղան, փաշա անունով պատուուած, թուրքերուն եւ հայերուն մէջ ընդհանրապէս մեծ հռչակ հանած էր: Ապառիւլ աղան ինքն ալ շատ ազդեցիկ մարդ էր: Կային ուրիշ տուներ ալ՝ թուրք կրօնին ոգիով լարուած՝ որ կը հալածէին աչքի զարկած հայ ականաւոր դէմքերը:

Որքան կը յիշեմ Պարոնեաններուն դէմ լարուած թշնամութիւնը այդ թուականէն մէկ-երկու տարի առաջ, փաշային եւ Աքիֆ աղայեց կը վերադրուէր: Ղեւանդ Եպս. Շիշմանեան յարմար առեւ առաջնորդութեան կանչուած էր: Հայ դեկաւլար դասակարգը հասկցած էր, թէ կարող առաջնորդի մը մօտ պիտի դառնէր ոչ միայն հողեւոր պետք, այլ նաեւ կորովի դեկաւլարը՝ Ազգային դործերուն: Ան տիրացած էր հայերէն, տաճկերէն, եւ գաղղիերէն լեզուներուն ալ. հմուտ էր նաեւ Օրինադիրքին (Նիգամնամէ):

Իր պաշտօնին անցնելէ ետք, յուշագիր մը կը ղրկէ կառավարութեան: Գայմազամը, արաբերէն ու պարսկերէն բառերու, թուրք լեզուի այդ ճարտար շարադրութեան մէջէն ելլելու ինքզինք անկարող զգալով, մեկնաբանութեան համար Միւլթիին օգնութեան կը կանչէ, որ նոյնպէս, իր կարգին, կը հիանայ Եպիսկոպոսի ոճին եւ վարպետ բանահիւսութեան վրայ:

Կարճ ատենէն ան իր տեղը կը գրակէ: Գայմազամը եւ թուրք ընտրանին կ'այցեկէն առաջնորդարան եւ փոխադարձաբար կ'ընդունին Առաջնորդին այցելութիւնը: Ունէր Գաւազ մը (առջեւէն գացող, ճամբան բացող) Յակոբ անունով:

Շիշմանեանը մեծածախս էր. իր այցելութիւններէն յետոյ, իր ձիուն հսկող, թուրք պաշտօնեաներու ծառաներուն, առատ նուէրներ կու տար: Թուրք մեծամեծներուն աւելի եւս յարգանք կը պարտադրէր: Անոնց կը սորվեցնէր իրենց մեծութիւնը: Կիւրիիցէք հարիւր քսան (120) տաճկական դեղին ոսկի տարեթոշակ կը վճարէին անոր, բայց դիտակցելով եւ առանց դժկամակութեան: Մարանեան Յարութիւն աղան թիկունք կանգնած էր անոր ծախքերուն, ուրիշ հարուստներ ալ իրենց բաժինը կը բերէին: Դատարանը Առաջնորդարան փոխադրուած էր, վէճերը հոն կը լուծուէին եւ թուրք պաշտօնեաները Մուրազգաս Էֆէնտիի ըրած կարգադրութեանց դէմ առարկութիւն չէին ընէր: Իր բոլոր գրութիւնները Օրինադիրքին այս կամ այն տրամադրութեան համաձայն խմբագրուած՝ առանց բացառութեան անոր հեղինակութեան դրոշմը կը կրէին: Եթէ Արաբկիր ունէր Եզնիկ Եպիսկոպոսը եւ Մուշեղ Եպիսկոպոսը՝ իրենց մէջքին հրացան անցուցած, Կիւրիին ալ ունէր Ղեւանդ Եպս. Շիշմանեան դիւանագէտը, աւելի յղկուած մտքով քան միւսները, որ առանց վէճի, տիրականորէն կը վարէր իր պաշտօնը խոր յարգանք պարտադրելով թէ հայ եւ թէ թուրք տարրերուն առհասարակ:

Ութսունական թուականը Կիւրիի հայ ժողովուրդին համար ոչ միայն կրթական յառաջդիմութեան, այլ նաեւ քաղաքական արթնութեան շրջան եղաւ: Ուսման եւ գիտութեան ճանաչումը կը մեծնար դպրոցներուն մէջ. սոյն ատեն, եկեղեցական երաժշտութիւնն ու երգեցողութիւնը կը բարելաւուէին: Նշան վարժապետ Չատրճեանի պաշտօնավարութիւնը այս շրջանին կը զուգադիպէ:

Այս օրերուն նաեւ եկեղեցական կարուածներն ու պիւտճէն համեմատաբար հաշուեկշռի կ'ենթարկուին: Մանուկ աղա Ինճէեան, անաչառ, կորովի եւ ուղղամիտ անձնաւորութիւն, ազգային ներկայացուցիչ կ'ընտրուի:

և Հասարակաց գործին փարելով, եկեղեցական կալուածները՝ մասնաւորե-
րու շահագիտութեան առարկայ դարձած, կը փրկէ ու կը դարձնէ արժանաւոր
սեպհականատէրերուն՝ այսինքն եկեղեցիներուն: Մայր եկեղեցւոյ երեսփո-
խանը, Սալըճի Յակոբ անունով, որ ուղղամիտ մէկն էր, հոգեւին նուիրուած
եկեղեցիին եւ անոր բարգաւաճման, երկու քսակ կը կրէր՝ թանձր կտակէ
փոքրիկ տոպրակներ, մէկը իր անձնականին, իսկ միւսը՝ եկեղեցիին: Կ'ըսէին
թէ վերջին ծայր պարկեշտ՝ խղճատօրէն տարած է իր ծառայութիւնը: Ան էր,
որ եկեղեցիին կալուածներ գնեց, եւ իրրեւ վաճառական՝ դրամը գործածու-
թեան դնելով, ղլտէր թէ շատ աւելի օգտակար կրնար ըլլալ, քան թէ զայն
անգործ ձգելով: Մայր վարժարանի յարակից խոպան գետինը ծախու առնե-
լով, բարձր ու քարուկիր պատերով շրջապատեց եւ միացուց իրարու եւ առա-
ջին անգամ բանջարանոցի վերածեց զայն: Այս պատեհութեամբ Սաղին գլխէն
ջուր բերին ստորերկրեայ խողովակներու միջոցաւ: 1895-ի կտորածէն յե-
տոյ այդ մասը խաւի (իջեւանի) եւ խանութներու վերածուած է:

Ղեւոնդ Եպիսկոպոսին քարոզները հրապոյր մ'ունէին իրենց մէջ: Մեծ
բազմութիւն կը լեցուէր Մայր Եկեղեցին, նոյնիսկ ծայրագոյն Ձախձորէն եւ
Շուղուլէն եկող: Բառին բուն նշանակութեամբ հոստոր մըն էր, իր Աստուա-
ծաբանական տաքուկ շունչովը: Տօնական օրերուն, իր քարոզը կը սկսէր օ-
րուան նշանակութիւնը ընդլայնող «Այսօր»ներու երկարապատում շարքով:
Սովորաբար, երբ պատարագիչը ինքը չէր, դպրաց դասին առջեւ, գորգի մը
վրայ կանդնած, կը խօսէր մեծ եռանդով: Թէեւ ժողովուրդը մեծ յարգանք
կը տածէր իր առաջնորդին հանդէպ, բայց ան ունէր նաեւ հակառակորդներու
փոքր հատուած մը, որ չի վարանեցաւ նոյնիսկ վատութեան դիմելու անոր
դէմ: Ասոնք դրամի խոստումով համոզեր էին կին մը, որ առաջնորդը զրպար-
տէր բարոյականի մեղանշումով: Ղեւոնդ եպս. եկեղեցւոյ բակը ճեմելու սո-
վորութիւն ունէր: Կինը դաղտագողի եւ սպասողական դիրքի մէջ, յանկարծ
անոր առջեւ կ'ելլէ, բայց իրեն տրուած պատուէրին հակառակ, կը խղճա-
հարի՝ երբ անոր դէմ հանդիման կը գտնէ ինքզինք: Եպիսկոպոսը տեսնելով
զինք այդ շփոթութեան մէջ, կը հարցնէ. «Ձաւա'կա, ի՞նչ կ'ընես հոս»:

Կինը կը պատմէ ամէն բան, թէ ինք վարձուած էր դրամի փոխարէն,
որպէսզի իր ձայնը ձգէ եւ օգնութեան կանչէ, անոնց՝ որ բակէն դուրս կը
սպասէին լսել զինք եւ հասնիլ իրեն: Հիմա ներողութիւն կը խնդրէ եւ սրտի
խաղաղութեամբ տուն կը դառնայ:

Յաջորդ Կիրակի, ան իր քարոզը սկսաւ ըսելով. «Այն ամէն մեղք, որով
մարդիկ կը մեղանշեն: պիտի ներուի անոնց, բայց ով որ Սուրբ Հոգւոյն դէմ
կը մեղանշէ, բնաւ պիտի չներուի անոր»:

Անուն չտուաւ, համառօտ անցաւ միջադէպին վրայէն, մէջ ընդ մէջ
քան մը դըրբելով: Անոր արդար բողոքին ձայնը թունդ հանեց ժողովուրդը,
որ անակնկալի եկած, իր ցասումը արտայայտեց այդ վատ արարքի հեղինակ-
ներուն: Եւ ես տեսայ, թէ շատերուն աչքերը թրջուած էին: Մանաւանդ այն
ատեն՝ երբ իր վեղարը ետ առաւ, ծունկի եկաւ եւ աղօթեց անոնց համար, որ
Աստուած բարին տայ ու ներէ իրենց: Ապա, Առաջնորդը վշտացած իր դէմ
եղած անիրաւութեան համար, հրաժարականը տուաւ հրապարակով, առար-
կելով թէ այդ գրութեան մէջ այլեւս օգտակար չէր կրնար ըլլալ:

Եկեղեցին աւարտելէ ետք, ժողովուրդը բակը խոնուած էր. անոր հե-
տեւեցաւ դէպի Առաջնորդարան: Մեծերը ժողովի նստան, խնդրեցին որ մէկ
երկու անձի համար իր ժողովուրդը չլքէր: Բայց ան տեղի չտուաւ: Կանխաւ

ճամբու պատրաստութիւնը տեսած՝ ձիուն վրայ բարձրացաւ: Սազին Պօղազէն ժողովուրդը հետեւեցաւ իրեն եւ անոր ձիուն ընթացքը կասեցուց: Եղան մարդիկ, որ անոր ձիուն առջեւէն իրենց գլխուն վրայ դարձան (սոմպալախ), ճիշդ այնպէս, ինչպէս՝ որ ընդունուած էր նոյն տեղը իր առաջնորդութեան պաշտօնը ստանձնելէ առաջ: Ամօքուած էր, դարձաւ իր պաշտօնին մեծ շուքով ու ցոյցերով:

Ղեւոնդ Եպս. հետոր էր: Նաեւ կրնար ոտանաւորներ զրել: Իբրեւ ձայնաւոր, կ'ըլլար ժամանակ, որ սրբասացութիւնը ինք կը սկսէր, ու մենք մեղուի պէս կը մղայինք (դէմ կը քաշէինք): Շաբաթ իրիկունները ժողովուրդին դառնալով բարձրաձայն եւ յոյժ հանդիսաւոր իր «խաղաղութիւն ամենեցուն»ը կ'որոտար:

Փառաւոր, կ'ըր ու գեղեցիկ դիմազիծ մը ունէր, բայց չի էր մէկ աչքով. իր մօրուքին մէջ ճերմակը ինկած էր, մօտ 55 տարեկան ցոյց կու տար: Ժողովուրդէն աւելի Առաջնորդը ինք կը զգար, թէ դիտնական քահանաներ պէտք էին, եւ չէր կրնար գոհացում ստանալ խեղճ ու անճարակ կղերներով: Անոնցմէ ոմանց կարգացածին սխալը երբեմն իր առաջնորդական աթոռին վրայէն կը շտկէր բարձր ձայնով: Այդ կացութեան իբրեւ դարման էր, որ Մայր եկեղեցոյ մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ ձեռնադրութիւնը Վաղինակ Ծայրադոյն վարդապետ Սիտակեանի եւ երկու քահանաներու՝ Տէր Հմայեակ ձեռնադրեանի եւ Տէր Գարեգին Յովակիմեանի:

Ղեւոնդ Եպսկ. Շիշմանեան Կիւրինի առաջնորդութենէն քաշուեցաւ 1889-ին: Վերջին անգամ իր ձայնը լսուեցաւ Էրզրումէն, 1895-ի հայկական կոտորածին երբ Լօրտ Սալգալէրի գրած իր նամակը զբառնութեան բովէն վար դրուելով թուրք կառավարութեան կողմէ իբրեւ պատիժ՝ Բեթլէհէմ կ'աքորուէր ան, ուր եւ վախճանեցաւ:

Աբրահամ Եպս. Մամիկոնեան: Չեմ գիտեր, թէ որչափ ատեն մնաց Աբրահամ Եպիսկոպոս՝ երբ առաջին անգամ եկաւ Կիւրին, բայց կը յիշեմ իր շարք մը քարոզները, քանի մը Կիրակի յաջորդաբար: Անոնք շատ աւելի ժողովրդական էին, հասկնալի, որովհետեւ առակներով եւ օրինակներով կը խօսէր հետեւողութեամբ իր Վարդապետին (Յիսուսի), որ նոյնպէս առակներով խօսած էր:

Ամէն անգամ, որ քարոզը պիտի աւարտէր, ժողովուրդին վրայ ձեռամբարձ իր օրհնութիւնն ու մաղթանքները կու տար: Իր շարք մը հոգեւոր օրհնութիւններու կարգին պիտի աւելցնէր նաեւ՝ «Հող բռնէք, ոսկի ըլլայ»: մաղթանքը, որ Տէրունական աղօթքին «գհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»ը կը յիշեցնէր, բնաւ աւելորդ չէր իր այդ օրհնութիւնը, ցորչափ մարդ նիւթին, այսինքն՝ հացին հետ կապուած է:

Աբրահամ Եպս. խորապէս սիրեց Կիւրինի ժողովուրդը եւ կը ցանկար անոր առաջնորդութեան, բայց չեմ գիտեր թէ ինչու չմնաց: Կը պատմեն թէ 1895-ի կոտորածէն մէկ երկու տարի ետք, դարձեալ եկած է Կիւրին, ինչպէս կ'ըսեն, «Հողն ու ջուրը քաշած են զինք»: Վախճանած ու թաղուած է հոն:

Աբրահամ Եպս. Մամիկոնեան վարդ երեսներով, լեցուն կազմով հսկայ մարդ էր, իրմէ մեծն ու պատկառելին դեռ տեսած չեմ եւ կղերականներու մէջ, մինչեւ այսօր:

Կարապետ Ծ. Վարդապետ: Իբրեւ վարդապետ՝ ճարպիկ ու կարող մարդ էր, թուրքերէնի հմուտ: Կ'ըսուէր թէ տաճկախօս շրջանէ մը եկած էր, բայց իր քարոզները մաքուր հայերէն էին: Սուլթանին դահակալութեան տա-

րեգարձին, Ղօնախին առջև խօսեցաւ տաճիկերէն՝ այնչափ սահուն ու յաջողոր
թուրք ու հայ զարդացած դասակարգին աչքը մտաւ այդ օրը: Փափաքելի էր
ի հարկէ առաջնորդին՝ տիրող լեզուին հմուտ ըլլալու պարագան, իր ժողո-
վուրդի իրաւունքներուն պաշտպանութիւնը արդարօրէն տանելու համար:
Այս թուականին հայ ու թուրք լարուածութիւնը հեռահեռէ իր ծայրագոյն
կէտին կը հասնէր. բողոքագրեր կը զրկուէին Պատրիարքարան այն լազմա-
պիսի հարստահարութեանց համար, որ հայ ժողովուրդին եւ հայ գիւղացիին
դէմ էին եւ մասնաւոր հալածանքի բնօյթը կը կրէր:

Կարապետ վրդ. քահանայութենէն բարձրացած էր ծայրագոյն վարդա-
պետութեան, երէցկնոջ մահէն յետոյ: Ունեցած էր դասակ մը՝ Սեպուհ անու-
նով, 12—13 տարեկան, որ Նշան վարժապետ Չատրճեանին կ'աշակերտէր
1890-ի առեւնները:

Մայր վարժարանի վերի իր յարկի բաժինէն կը լսուէր հայրենասիրու-
թեան անպուսպ պոթիլումը, կզերականի գառազեղին մէջ զսպուած, երբ ան
մերթ ընդ մերթ իր բարձր ձայնով կ'երգէր. —

«Այս Հայաստան, երբ 'տի տեսնեմ քեզի լսաւ,
Ուրախ գուարթ սպասեալուած ու անցաւ,
Չմեռնէի մէկ տեսնէի կարիս նստած հայ իշխան,
Հայ տառերով գրուէր հայոց հրաման»: Եւ այլն:

Առաւօտ մը տեսայ, թէ մարդիկ ու բժիշկներ առաջնորդարան կը մըտ-
նէին ու կ'երնէին: Կամաց մը ներս սահեցայ եւ տեսայ զինքը անկողնի մէջ,
վիզը ուռած ու կարմրած: Կ'ըսէին թէ իջուածք է: Մահէն ազատեցաւ, բայց
կիսովին ընդամացած էր. եկեղեցի կը յաճախէր, բայց ալ քարոզ չէր խօսեր
եւ ոչ ալ գործօն դեր մը ունէր այնուհետեւ:

Զէյթունցի քահանայ Տէր Սահակ Եպարայեան: Զէյթունցի քահանային
անունը Տէր Սահակ էր: Բարեձեւ եւ համակրելի բնաւորութեան տէր, ձախ
դասի վրայ կը մնար: Իր ժամանակ, պարկած էր երգեցողութիւնը: Ան աղուոր
շարական կ'ըսէր: Ամառ ատեն, Հոփսիսիմեանց կոյսերու տօնին, որոնց նու-
իրած է 36 համար շարական մը, «Անձիմ անխրեալ սիրոյն Քրիստոսի», Ա.
ու Բ. ի կարգով: Իր երգած եղանակին երաժշտական հաղորդականութիւնը,
իւր շուրջ հաւաքեց զպրաց դասին մասնակցողները, որոնք խնդրեցին իրմէ
զայն սորվեցնել իրենց ալ: Ասիկա իր Կիւրին ժամանումի առաջին տարին էր:
Մեծ ուսում չունէր, բայց հասարակ ընթերցանութեան եւ երգեցողութեան
մէջ յաջողապէս կը կատարէր իր բաժինը:

Դանիէլ Տէր Աբրահամեան: Այդ էր իր աշխարհականի անունը: Տիրա-
ցութիւն եւ քիչ մըն ալ վարժապետութիւն ըրած էր դուրսը: Մօտ 40—45
տարեկան կար: Տէր Աբրահամ, ուրկէ իր մականունը կու դայ, եղած է հին
քահանաներէն մէկը, Տէր Սահակեց (Շահապեց) քահանային ժամանակա-
կից: Ասոնք երկուքը ժամտախտիս տարին (1849—1850), մէջտեղերը քանի մը
ամիս, երբ ան անխնայ կը հնձէր բնակչութիւնը, խիստ գործօն դեր կատա-
րած են: Իսկ Կանանչ էմմին մեռել թաղեր է կամաւոր եւ բողոքովին ան-
վարձ, եւ նաեւ առանց վարակուելու: Մեռելակիրները, թուով չորս հոգի,
ննջեցեալը նաչին վրայ կապած, իրենց ուսերուն վրայ գերեզման կը տանէին:
Այդ տարին, օր մը, Տէր Աբրահամ խեղճ ու յուսարեկ, մեռել թաղելէն յոգ-
նած, եկեղեցիի դուռիցին մէջ խորանին կողմը դառնալով, իր երկու բազուկ-

ները վեր բարձած, սաչափ բան ըսեր է միայն. «Այ հերիք է, Տէր Աստուած, շուն դարձանք»:

Դանիէլը Տէր Աբրահամի թոռն ըլլալու է: Միջակ կարողութիւնով մարդ՝ ունէր զօրաւոր ձայն, եւ երբեմն կրնար 15—20 վայրկեան քարոզ խօսիլ: 1895-ի կոտորածին, թուրք զեղակի մը զոհ դացած է, Բէթէն-Չալիքին գլուխը թոփալենց պարտէզին պատին ու դետին եղերքը, զինք տեսնողներու վկայութեամբ:

Մէրարիմ տղան: Այս անունով ծանօթ էր ամէնուն: Ո՛չ իր անուն-մականունը, եւ ոչ ալ քահանայութեան անունը կը յիշեմ: Երգելու եւ եկեղեցւոյ ծառայելու անսահման փափաք ունէր: Մայր վարժարանին մէջ Նշան վարժապետին աշակերտներէն՝ ժողովուրդին եւ ժամանակին գոհցում տալու աստիճան կարողութիւն ու սլաշար ունէր: Ինք անձամբ իր ճիւղերով ստորագրութիւն հաւաքեց եւ քահանայ ձեռնադրուեցաւ: Թէ ո՞ր զնաց, ո՞ր մէկ եկեղեցւոյն կապեց ինքզինք, չեմ յիշեր: Մայր եկեղեցւոյ մէջ ալ չերեւցաւ:

Այս շրջանին քահանաները կը ձեռնադրուէին Սերաստրոյ մէջ, Յովհաննէս եպիսկոպոսէն:

Աֆարեան (Խոսեան) Անդրէաս: Անդրէաս իր աշխարհական անունն է:

Թէ Մէրարիմ տղուն եւ թէ Խոսեանի (Աֆարեանի) մասին տե՛ս կրթական բաժնին մէջ: Ասոնց ձեռնադրութիւնը 1895-ի կոտորածէն քիչ առաջ տեղի ունեցած է: Վերջինը Տէր Յեսուրի հետ Ձախձորի Ս. Փրկիչ եկեղեցւոյն վիճակուած է եւ կառավարական եւ ալլ զործառնութեանց մէջ դործօն դեր ունեցած: Այս վերջին երկուքը թէպէտեւ Մայր եկեղեցւոյ ծառայած չեն, բայց անոր սպասարկած են երկար ատեն, մանկութենէ սկսեալ:

Մկրտիչ Կաթողիկոս Քեֆաիգեան (Վեհապետեան): Մեր բարձրաստիճան եկեղեցականներուն մէջ, Խրիմեան Հայրիկի, Խորէն Նար-Պէյ, Իզմիրլեանի պէս, արքունական եւ ալլ շքանշաններ կուրծքին՝ Կիւրին կու դար Մկրտիչ Կաթողիկոս մեծ շուքով:

Կիւրինը հինէն ի վեր Սիսի Կաթողիկոսութեան թեմ եղած է: Սբ. Միւռոնը անկէ կու դար: Եկեղեցւոյ մէջ Սիսի Կաթողիկոսութիւնը կը յիշուէր պատարագի արարողութեան ատեն. «Տանն Կիլիկիոյ, Մկրտիչ Սրբազան Կաթողիկոս»:

Իր Կիւրին այցելութեան ժամանակ Ձախձորի փայտաչէն եկեղեցին եւ հին դպրոցին շէնքը կային: Եկեղեցիի արտաքին պարիսպին դուռէն սկսեալ մինչեւ մուտքը, մինչեւ դպրոցին առջեւ՝ դորդ փռած էին: Տղաք շապիկ հագած՝ երգելու փորձեր կը կատարէին: Այդ կէսօրէն յետոյ, այցելութեան կարգը Ձախձորցիին էր:

Կաթողիկոսին մեծութեան եւ պատուին յատուկ՝ անոր ջորին ալ հասարակ ջորիներէն կը գատուէր: Զէյթունի ժայռուտ եւ դժուարին արահետներէն, որուն յատակէն Սիհուն գետը վիշապի մը պէս իր մէջ դլորուածները կը կլլէ ու կը մարսէ, ջորիով եւ հշով միայն կարելի էր անցնիլ: Կաթողիկոսը քանի մը շաբաթ մնացած է Կիւրինի մէջ եւ ժողովուրդին կողմէն ըստ արժանւոյն մեծարուած:

Նետի Պալա: Կարծես թէ անուն չունէր ան եւ այս վերի կոչումով եկած ու դացած է Կիւրինէն:

Նէտի Պալան Մայրապոյն Վարդապետ էր ու կ'ըսէին թէ եօթը լեզու գիտէր: Երբով մարդ էր եւ շատ լաւ գիտէր բնականաբար ժողովուրդը իրեն

գրաւելու կերպը: Խուռն բազմութիւն լեցուած կ'ըլլար եկեղեցին, այնպէս որ մէկ մասը տողոց՝ որ իրենց հայրերուն քով սեղմուած կը տանջուէին, իր հրա-հանդով աջ ու ձախ դասին վրայ բերել տուաւ:

Կը յիշեմ քարոզները, որոնք կու տար ճոխ հայերէնով եւ զգացումով:

Ձախձորի վարժարանը: Հոն էր, որ առաջին անգամ այր ու բեճին վարժուեցայ: Քերական, Սաղմոս, Նարեկ եւ քերականութեան ութը մասունք բանիները ծամծմեցի: Եկեղեցին ու դպրոցը մէկ բակի մէջ էին, ինչպէս որ էին Մայր եկեղեցին ու վարժարանը:

Ձախձորի հին եկեղեցին փոքրիկ, անշուք էր, տախտակով շինուած: Ան այրեցաւ 1880-ական թուականին, եւ անոր տեղը կառուցուեցաւ քարուկիր ու դմբէթաւոր Ս. Փրկիչ եկեղեցին մեծ ծաւալով, Արպոյենց սահմանէն քիչ մը հող եւս կցելով տեղւոյն: Հին եկեղեցին Արպոյենց շատ մօտիկ էր, մինչ նորը շինուեցաւ կեդրոնական հաւասարակշռութեամբ ու երկու թեւին վրայ ընդարձակ անցքերով:

Հին վարժարանը թէեւ խոշոր՝ բայց շատ անյարմար էր, եւ զառիւլարի վրայ՝ առուէն մինչեւ եկեղեցիին շէնքը: Այն կէտէն, որ վարժարանին շէնքը կը սկսէր, Արպոյենց կողմէն անցնելով քարէ սանդուղիներով կը բարձրանա-յինք մինչեւ շէնքին վերջաւորութիւնը: Միւս կողմը (Ձախըրենց) զառիւլար էր եւ շէնքին պատին տակէն եկողը՝ քարով պատրաստուած նեց անցքէն վեր ու վար կը բարձրանար կամ կ'իջնէր: Քարէ պատը, որ փողոցին վրայ խոշոր դռներով կ'առաջնորդէր դէպի եկեղեցիին բակը, մօտ տասը ոտք բարձրու-թեան վրայ կը պաշտպանէր ժողովուրդը: 1895-ի կոտորածի ժամանակ Ձախ-ձորի ժողովուրդը կրցաւ 10,000 քուրֆ ու ֆիւրա կառուղիներու դէմ մաքառիլ մինչեւ երեք օր: Նոր վարժարանը շատ դեղեցիկ դերք ունէր պաշտպանութեան համար: Հին վարժարանը երկյարկանի էր. վարի յարկը՝ որ աւելի մութ էր, չեմ յիշեր, թէ աշակերտութեան համար գործածուած ըլլայ ան: Այդ յար-կէն վեր, շէնքին մէջէն սանդուղիներով կը բարձրանայինք վերի յարկը՝ վար-ժարանը: Առաջին քառորդ մասը, որ բաւական էր 40-ի չափ աշակերտներու սպասարկման, իրրեւ ոտնամանի եւ այլ իրեղէններու յատկացուած էր: Միւս քառորդ մասը, որ մէջտեղի դուռով մը, պատով մը բաժնուած էր, Տէր Յեսու քահանային յարկաբաժինն էր իր քահանայադործութենէն քանի մը տարի ա-ռաջ: Շէնքին միւս կէսը՝ այս երկու բաժիններուն մէջտեղ, մուտքով մը կ'ա-ռաջնորդուէր: Մուտքին դիմաց կը նստէր Թադօ Խալֆէն եւ իր աջ ու ձախ թեւին վրայ կը հսկէր 100-ի չափ աշակերտներու: Այդ օրերուն դասերու բա-ժանում չկար. կարելի է եզրակացնել թէ շատ դժուար գործ եղած ըլլալու է յիճակը անոր, որ ուսանողներու իւրաքանչիւրին մէկիկ մէկիկ դաս ու գիր տալու հարկին տակ կը գտնուէր: Այսպէս չէր Տէր Յեսուի յարկաբաժինը, հոն դասերու եւ կարգի բաժանում կար:

Տէր Յեսու Վարդապետեան կը պաշտօնավարէր վերը յիշուած չափա-ւոր բաժնին մէջ: Մուտքի դրան վրայ՝ ներքին մասին մէջ խոշոր, գիրերով զրուած էր. Մեսրոպեան վարժարան, 1881:

Վարդապետեանը իրրեւ հայազէտ վարժապետ, մեծ անուն ունէր, ճանչցուած էր նաեւ վարպետ համարակալ. տիրացութիւն ալ կ'ընէր: Այն թուականը, որ Նարեկը սահուն կերպով կը կարդայինք եւ գրաբար մասունք բանին թութակաբար զոց ընելու դժուարին աշխատութեան լծուած էինք, 1884-1885-ին էր:

Չախ-ձորի վարժարանը ատեն մը, մնայուն վարժապետի պակասէն, որ բնական հետեւանքն էր ժողովուրդի անտարբերութեան, անգործութեան մատնուեցաւ: Դրսեցի անծանօթ դէմքեր եկան ու անցան. ոմանք հազիւ թէ շարաթ մը մնացին: Իսկ մէկը քիչ մը աւելի, որ բաւական սիրուեցաւ աշակերտներէն, երգի դաս կու տար, եւ կը նմանէր յեղափոխական գործիչի մը: Գաղտնի խօսակցութեանց մէջ էր. եկեր էր առաքելութեան մը համար եւ խոշոր ծաւալով երգարան մը ունէր: Ասոնց սորվեցնելու մեքսալը հիներէն կը զանազանուէր. նոր դասազիրքերու պահանջը կը ներկայացնէին, որ ծնողներուն շատ հաճելի չէր, պարզ այն պատճառով որ ամէն տուն ունէր Սաղմոս, Աւետարան, Նարեկ: Պարզ էր թէ ինչ դժուարին կացութեան մէջ էին թէ վարժապետը եւ թէ աշակերտը: Գրիգոր Վարդապետեան, քահանային եղբայրը, եւ ժամկոչ եւ վարժապետ, քիչ շատ տեղ մը կը լեցնէր փոքրիկներու իրբեւ դասատու: Այլօղլանեան հովիւ Ուհանին տղան, այս ատենները տարէց աշակերտներէն էր, տիրացութիւն կ'ընէր (ապագայի Խորէն եպօ. Դիմաքսեանը): Ժողովուրդը այս յարափոփոխ վարժապետներու անունը որակած էր ուլ արածոյ: Ասոնք հիներուն պէս չէին, հիներուն ճամբէն չէին երթար, նոր գիրքեր կ'ուզէին աշակերտներէն եւ այսքանը բաւական էր զիրենք վարկարեկելու: Ժամանակը յղի էր պատրաստութեամբը այն մեծ յեղաշրջումին՝ որով հինը տեղի պիտի տար նորին: Դպրոցի պահանջը հետզհետէ կը շեշտուէր հայկական դասառներուն մէջ, ամէն կողմէ: Կիւրիւնը չէր կրնար խուսափիլ իր բաժին պարտականութենէն: Կիւրիւնը ուրիշ քաղաքներու հետ վաճառակա-նութեան ցանցով հաղորդակցութեան մէջ էր, իր գաւազները ցրուած էին ամէն տեղ՝ Պոլիս, Էրզրում, Տրապիզոն, Սամսոն, Սեբաստիա, Հալէպ, Էնկիւրիւ. Չիլէ: Անոնք բոլորն ալ գրեթէ իրենց ծննդավայրին հետ կապուած, կը պահէին իրենց տունը, պապենական օճախը:

Թաղօ Խալֆէն մեռած էր, Վարդապետեան հեռացած ասպարէզէն քահանայ ձեռնադրուելէն ետք: Հայրս զիս հանեց եւ զրկեց Մայր եկեղեցիին վարժարանը, Նշան վարժապետ Չատրճեանի քով, որ շատ անուն հանած էր այդ օրերուն:

Յայտնի բան էր, թէ Չախ-ձորի թաղը ունէր իր մէջ բարիքի նախանձը: Պակաս էին կենսունակ ուժեր, թաղին ընտրանին գիտէր ու կը զգար իր կարիքը: Նշան վարժապետ Չատրճեանին եկեղեցական արարողութեան տուած փայլն ու հմայքը շատեր հեռաւոր թաղերէն, ի միջի այլոց Չախձորցիները իրեն կը քաշէր: Վերջապէս իրենք ալ ճարեցին ձայնաւոր վարժապետ մը, Թաղէոս Տէրտիարեան, որ թէեւ չունէր գրաւիչ ու բարձր ձայն, բայց իր սորվեցուցածը ձայնազրուած էր, ունէր մեծազիր ծաւալով նօթագրեալ հաւաքածոյ մը շարականի եւ եկեղեցական արարողութեանց, որ իր հետն էր երգեցողութեանց պահուն եւ միշտ գործածութեան մէջ: Երեք տարի չափ հագիւ մնաց: Բայց պատրաստ էր զպրաց դասը, որ իր մեկնելէն յետոյ շարունակեց ծառայել եւ սպասարկել եկեղեցիին, որուն մէջ ամենէն աւելի աչքի զարնող անձը Հայկակ Արպոյեանն էր: Կային ուրիշներ ալ, ինչպէս Արմենակ Բանեանը, որ մնաց այդ պաշտօնով մինչեւ համաշխարհային պատերազմը: Արպոյեան շատ երկար չմնաց եւ իրեն յաջորդեց այս վերջինը, նախ Ս. Փրկիչ, եւ ասոր Մայր եկեղեցիին մէջ:

**

Աշխարհի մէջ ամէն բան իր շրջանն ունի ծրելու, ծագիլիլու, արգասաւորելու, եւ ժամանակը նաեւ՝ տկարանալու, ծերանալու եւ չորնալու: Բայց

բարոյական եւ մտային զարգացումները ո՛չ կարգ եւ ո՛չ ալ կանոն ունին, ասոնք խաղաղութեան եւ պատերազմի հետ կապուած են. մէկը անոնց դուռը կը բանայ եւ միւսը նոյն դուռը կը բացէ: Ուսումն ու գիտութիւնը հալածանքի սառնաշունչ քամիին ազդեցութեան տակ չեն կրնար աճիլ ու զօրանալ: Այն շրջանը թոյլատու էր որ մարդիկ ուսմունքի կարեւորութիւն տային եւ քիչով ու խեղճով կարելի չէր գլուխ հանել: Օրուան պահանջն էր ունենալ կարող տաջնորդներ, կարող ուսուցիչներ, կարող քահանաներ:

Կիւրիւնցին ա՛յս շրջանը կ'ապրէր: Հասակ առած սերունդը բաւականին ուսմունք չունէր: Անգրագէտները մեծագոյն տոկոսը կը կազմէին: Նամակ դրել կարողալը քիչերու սեպհականութիւնն էր. ծնողները սկսեալ էին իրենք զիրենք գոհողութեան վարժեցնել. վարժապետի եւ վարժարանի վրայ տարբեր աչքով կը նայէին: Հասարակ արհեստաւորն ու գործաւորը իրենց զաւակներուն տարեթոշակին անունով տրամադիր էին մէկ-երկու մէծիտ եւ աւելի վճարել զպրօցին: Եւ ա՛յս՝ այն գեղեցիկ երեւոյթն է կեանքին, ուր յանկարծ մայր բնութիւնը իր կենսառատ ծոցէն յեղաշրջում մը կը ստեղծէ: Այլեւս ուսմունքը մասնաւորներու մենաշնորհը չէր. այդ հողին վրայ աշխատողն ու քրտնոյդը պէտք էր, որ իր բաժինը ստանար, եւ վերջապէս Կիւրիւնցին իր պատեանէն դուրս կ'ուզէր ելլել:

Այդ ատեն, հացահատիկին գինը շատ թանկ էր,⁽¹⁾ սպուքեան տարիս էր՝ մեր բարբառով: Շատեր դարիի ալիւրի գործածութեան կը վարժեցնէին իրենք զիրենք: Մեր վարժապետը՝ Տէր Յեսու, օր մը թարմ եփուած բաց հացի գէջ մը բերած էր զպրօցը իրենց տունէն: Առուին մօտ, զպրօցին բակը ելած էինք: Ան մեզի սովէնուս ալ մէյ մէկ կտոր հաց բաժնեց, կերանք, շատ համով էր: Ալիւրին մէջ ուրջ քանակութեամբ փաթաթէս խառնուած էր, եւ առաջին անգամ մեր վարժապետը գետնախնձոր մշակած եւ առատ բերք ստացած էր անկէ: Պատուիրեց որ մեր ծնողքին պատմենք, թէ մէկ փաթաթէսը մաղ մը բերք կրնար արտադրել՝ մշակութեամբ. իրօք ալ յաջորդ տարին, Սեղան, մեր թաղի միակ թուրքը, որ բանջարեղէնի մշակութեամբ կը զբաղէր, ըսուածէն պակաս չարտադրեց: Այդ թուականէն սկսեալ փաթաթէսի մշակութիւնը ընդհանրացաւ: Աշակերտները, որոնք շաբաթական երկուական հաց կը տանէին վարժապետին, (այս էր սովորութիւնը նաեւ հովիւին համար), այդ օր վարժապետէն հիւրասիրուեցան:

Մարդիս Վարդապետեան տիրացու ալ էր, եւ եկեղեցիի արարողութեան կը ծառայէր սիրով եւ յետագային եկեղեցւոյ պաշտօնեայ դարձաւ եւ Չախձոր թաղին քահանայ:

Կոտորածէն ետք, 1896 թուին, Տէր Յեսուն զպրօցին ղեկը դարձեալ ձեռքն առած, վարժապետներու եւ անոնց դասերուն ընտրութիւնն ընելէ յետոյ, մէկ կողմէն իր զարնուած հօտին հովուութիւնը, միւս կողմէն նոր սերունդի դաստիարակութիւնը իր զբաղումն ըրած էր: Այդ տարին սիրով ընդունեցի իր հրաւէրը եւ մնացի Չախձորի թաղը, ճամբուս վրայ թուրք բնակչութեան չհանդիպելու առաւելութիւնը՝ բարեբախտութիւն համարելով ինձ համար:

(1) Այդ տարին հարուստները բոլոր քաղերէն հաւաքուեցան Մայր եկեղեցւոյ խուցը, աղիւսներուն օգնութեան հասնելու միտքով: Ժողովը շատ յաջող եւ արդիւնաւոր եղած էր. ամէնքն ալ իրենց շատը տուած էին, իսկ Մարաքեան Յարութիւն աղան 500 քաս ցորեմ տուած էր: Թասը հաւասար է մօտաւորապէս 20 ֆիլոյի:

Հին եկեղեցին ու հին վարժարանը մոռցուած էին եւ անոնց տեղերը նորերը շինուած : Նոր ծրագիր , արդիական մեթոտ եւ տեղական ուժերու միացում՝ կազմած էին այն գրութիւնը , որ իր ընթացքին մէջ շատ բան կը խոստանար , եթէ միայն խաղաղ գոյալիճակն ու կեանքի ապահովութիւնը վտանգի տակ չըլլային հայուն համար :

Այսպէս՝ կը յիշեմ թէ ուսուցչական կազմին մէջ էին Տիգրան Գոչունեան , Վարդան եւ Համբարձում Տէմիրճեաններ , ինչպէս նաեւ Մանուէլ Օհնեան :

Նշան Վրժ . Թէրզեան : Թէրզեան Չախճորի եկեղեցիէն կէս մղոն հեռուորութեան վրայ՝ Թանդարան կոչուած շէնքին մէջ կը դասուանուէր : Շէնքը կռկիկ վիճակի մէջ՝ 30—40 աշակերտի համար հազիւ բաւական էր : Ժողովուրդը՝ ինչպէս ամէն բանի մէջ իր ըսելիքն ունի , այս անգամ ալ անոր կարողութեան մասին համաձայն ըլլալով հանդերձ , դատաւիճիւ մը աւելցուցած էր անոր , պնդելով թէ անհաւատ է եղեր :

Օր մը , հօրս հետ խօսած ատեն , հարուստներէն մէկը կը թերազրէ իրեն , որ զիս Կիւրիի Մայր վարժարանէն հանէ եւ Թէրզեանի քով զրկէ : Աղան բարեխօսելու գործը իր վրան առնելէ յետոյ՝ կ'աւելցնէ .—

— Վարպետ , հիմակուրնէ ըսեմ , որ տղադ ճերմակ (անհաւատ) կ'ելլէ անոր քովէն , թէեւ շատ բան կը սորվի եւ շատ կը յառաջդիմէ :

Այդ իրիկուն ընթրիքէն յետոյ հայրս խօսք բացաւ եւ ինծի հարցուց թէ կ'ուզէի՞ Թէրզեանին քով երթալ ուսանելու համար : Չախճորէն մինչեւ Մայր վարժարանը 4—5 մղոն ճամբայ պիտի կտրէի ամէն օրը միայն մէկ կողմի վրայ : Մայրս անշուշտ կը փափաքէր որ ճամբաս քիչ մը կարճնայ : Հայրս առարկեց .

— Բայց , կնի'կ , ճերմակ կ'ելլէ ըսաւ Յակոբ աղան . եւ ճերմակին բացատրութիւնը տուաւ մօրս ալ :

Թէրզեան եկեղեցիին հետ գործ չունէր , ձայնաւոր չէր : Նշան վարժապետ Չատրճեան բարեպաշտ էր եւ վերջապէս տան մէջ եզրակացութիւնը այն եղաւ , որ Չատրճեանի քով մնամ :

Թէրզեանը երկար չմնաց Կիւրիին , շուրջ 3—4 տարուան շրջան մը : Իր պաշտօնավարութեան սկիզբէն ունէր բաւական հասուն աշակերտներ , որոնք այդ կարճ ատենին կարող եղան ուսման իրենց մակարդակը բարձրացնել , մասնաւորապէս Փրանսերէնի մէջ : «Թէրզեան օրէնք դրած էր իր չափահաս աշակերտներուն համար՝ դասարանին մէջ Փրանսերէն միայն խօսիլ» , այսպէս լսած էինք եւ նոյնիսկ նկատած , թէ անոնցմէ ոմանք դուրսն ալ իրարու հետ Փրանսերէն կը խօսէին , ուրիշներու նախանձը շարժելու աստիճան :

Թէրզեանը կանչուեցաւ Սիսի Կաթողիկոսարանին կողմէ իբրեւ դասատու , զոր ընդունեց եւ մեկնեցաւ իր նոր պաշտօնին : Շատ երկար չապրեցաւ , օր մըն ալ լսեցինք թէ իր մահկանացուն կնքեր էր , դեռ երիտասարդ հասակին մէջ :

Իր աշակերտներէն Խաչատուր Ժամկոչեան , ձէլեան (Ունանեան) , Տէմիրճեաններ , Մանուէլ Օհնեան դասուանդութեան կանչուած էին արդէն :

Նշան վարժապետ Չատրճեան , Սեբաստացի էր : Մարանեանները բերած էին զինք եւ իրենց տան իբրեւ մէկ անդամը կը դուրդուրային անոր վրայ , Գիշերօթիկ Պատուելիէն յետոյ :

Չատրճեան իբրեւ ձայնաւոր բերուած է Մայր Եկեղեցին: Անոր դպրապետութեամբ՝ դպրաց դասը մարզուած էր եւ պատարագի երգեցողութիւնը կ'ընէր քաղցր ձայնով եւ ընկերակցութեամբ երգեհոնի: Ատեն մը՝ երգեհոնի գործածութիւնը արդիւրեցաւ Պոլսոյ Պատրիարքին հրահանգով: Վերջին տարիները երբ Չատրճեան արձակուողի առթիւ Սերաստիա զնաց, վերադարձին հետը բերաւ «Սուրբ Սուրբ»ի նորագոյն եղանակը: Երգեցիկ դպիրներու դաշն երգեցողութիւնը եկեղեցի կը բերէր հոծ բազմութիւն, ոգևորութեամբ լեցուն, այնչափ զմայլելի եւ ներդաշնակ կ'ընթանար պատարագի⁽¹⁾ արարողութիւնը: Չատրճեան բարձր ու դեղեցիկ ձայն ունէր, թէեւ առանց մօթայի էր իր դասաւանդութիւնը:

Նշան Չատրճեան իբրեւ ուսուցիչ շատ աշակերտներ ունէր, վերին դասի աշակերտներն էին Մերարի սողուն եւ Մատթէոս Անթիքաճեանին կարգը. յետոյ կու գար Խոցեանին եւ Մանուէլ Խաչիսաչեանին կարգը. կար երրորդ մը՝ ապա շորրորդը եւ վերջինը, որուն մէջ էր այս տողերը գրողը:

Ան հասակով կարճ էր, դէմքով կլոր ու կարմրտուն: Առանց բացառութեան սիրուած էր ժողովուրդէն: Ամուսնանալէն ետք շատ չմնաց Կիւրին: Սամսոնէն զինք կանչեցին եւ զնաց: Վերջին անգամ ըլլալով, 1897-ի գարնան՝ դէպի Ամերիկա ճամբուս վրայ, տեսայ զինք Սամսոնի մէջ: Լսեւ էր թէ Կիւրինցի ճամբորդներ իջեանած էին պանդոկին մէջ եւ եկաւ դտաւ մեզ: Յաջորդ օրը Կիրակի էր, եկեղեցի վացինք, ուր դարձեալ ինք կ'առաջնորդէր իր աշակերտներուն երգեցողութիւնը: Հոն ալ շատ սիրուած ու շատ ժողովրդականութիւն չահած էր, կ'ըսէին մեզի Սամսոնցի դաղթականներ:

Չատրճեանի մեկնելէն յետոյ Մայր վարժարանը տեղական ուժերով եւ նոր դրութեամբ մը սկսաւ առաջնորդուիլ: Սուրէն Սուրէնեան (Կալօղեան), որ Նշան Չատրճեանի առաջին կարգի աշակերտներէն եղած էր, Մարզուանի Գոլէճէն երկիր վերադառնալով, նոր ծրագրերով եւ արդիական եղանակով դասերու բաժանումն ըրաւ: Ատիկ առաջ, վարժապետ մը ամէն դասի աշակերտ կ'ընդունէր եւ անոնց կը սորվեցնէր նոյնիսկ լեզուներ, ինչ որ դիտէր կամ չէր դիտեր:

Չեմ յիշեր, թէ որքան տեւեց այս խոստմնալի վիճակը, որովհետեւ Ս. Սուրէնեան նուիրուած էր յեղափոխական գաղափարի եւ դադանի գործունէութեան: Գիտէինք թէ Հնչակեան կուսակցութիւն մը գոյութիւն ունէր, բայց ոչ աւելին. վերջին ծայր դադանի էր անոնց խօսակցութիւնը: Այդ օրերուն կը զուգադիպէր Սիրանոսեան ձանոյին հետապնդումը թուրք կառավարութեան կողմէ, որ սկսեւ էր աշխուրջ հսկել ամէն շարժումի վրայ: Իսկ Չէլլօն (Թորոս Մառուկեան) իր քաջագործութեան բացառիկ դրուագները կը կերտէր, եւ հասարակութեան ծանօթ էին իր հերոսական արարքները, որոնք տաճկերէն լեզուով Տէսքանի վերածած կ'երգէին:

— Կիւրիւն գագաւրմոս, քէնտի էրմէնի,
Օլտու պու եէրլերին պիւրիանի թորոս:

(1) Սակայն մատաղ մտքիս վրայ լաւ տպաւորութիւն չէր քաղուր այն՝ որ եկեղեցւոյ համար գործածուած գերմանկ շապիկն ու կարմիր ուսնոցը հագած, մեծ խուճրով, շուկայի մէջէն երգելով կառավարութեան շէնքին առջեւ հաւաքուած, «գատիչաճմ, չոգ եաչա» (քաւար շատ ապրիբ) մաղթանքներ օգը թմոյացնելը: Մեծ մեղք էր կարծես այդ հագուստներով հանդէս գալ այնպէս մեկու մը՝ Սուրբան Համիտի համար, գոր քաղափալիքք մարդկութիւնը կարմիր Սուրբան անունով սրակեց:

Եհալի, ժամուկբա՛կ փէշի՛նէ տփւշտի,
Պիր աստ՛մ քանըմագ պիւ նանը Թորոս:

— Օլուր օլմագլարըն սէօզինէ գանտըն,
Իպլիս ինվասընա դայէք ինանտըն,
Վուրտուղուն նանլարը քաւո՞ւզ մը սանտըն
Յօգաս սաթուն ալտըն, դուրպանի Թորոս:

— Աշիրէք իշինտէ քէնտիսի աքար,
Օլմուշտուր պու ճիհանը պիրքհանի Ձէլլօ.
Աքըն Արապխտան, քէնտի գանրուման,
Գուշ օլսա ուչամագ տէշիլ քի ինսան:

— Կէգէրտին տէրետաա հէմի գարատա,
Էֆֆեարին մալ տէշիլ, տէրտին փարատա,
Աւտիք տէրէսինտէ գալտըն մուհասարատա
Յէնի ատըն չըգտը ճիհանը, Ձէլլօ:

— Իննին տուեուրսա գորգուեօր հերքէս,
Խզինտէ գարանտը օն պինլի մէրքէգ,
Թէք կէօգտէ վուրտուղուն օն աքլը չէրքէգ
Թաւուք մը գանն էքտին ինսանը, Ձէլլօ:

— Էօլիւմի օգուչան ֆէհմ էտէր տէշի,
Գապընտա տուրուրսըն սէն օլան էշի,
Կիրքիւնլի Ծառուկեան քէօրէմիշ տէշի,
Ձէլգէլէյէ վերտին ճիհանը, Ձէլլօ:

— Պինէր իսէն աքընա արսլան օլուրսուն,
Ձէնկինտէն ալըրսըն ֆախրէ վէրքիսին.
Հարէմի տէշիլ սին, յըրսըգ տէշիլ սին,
Սէնին իսմին մէյտանտա, արսլանը Ձէլլօ:

*Բաւական երկար շարք մըն է ասիկա, որուն ամբողջական մասը չեմ
յիշեր:*

*Հետզհետէ քաղաքական մթնոլորտը տազնապալի կը դառնար եւ ձեր-
բակալութիւնները տեղի կ'ունենային Կիւրիոցի ականաւոր անձերու: Սուրէն
Սուրէնեան այդ պայմաններու տակ երկար չէր կրնար մնալ եւ թողուց Կիւ-
րինն ու հեռացաւ, բոլորովին կապուելով Կուսակցութեան հետապնդած դոր-
ճերուն:*

*Սուրէնեանի կարգին կու գան Շիրվանեան եւ Մրմրեան: Շիրվանեան
Ամերիկա գալով նախ քան 1895-ի կոտորածը, մեծ ժողովրդականութիւն շա-
հած է իր համեստ եւ անկեղծ բնաւորութեամբ: Սուրէնեանի չափով ուսմունքի
հետեւած չէ, բայց խօսելու իր յատուկ դրաւչութեամբ՝ Հնչակեան կուսակ-
ցութեան մէջ համբաւի հասած է:*

*Շիրվանը ծանօթ է Ամերիկահայ դաղութի հին անդամներուն, որոնք
զինք կը ճանչնան այդ անունով:*

Սմբատ Մամբեանը նոյնպէս երկար շարժումնաւարեց, անցաւ Ամերիկա : Անիկա վայելուչ եւ միեւնոյն ժամանակ ինքզինք արժեցնող երիտասարդ էր : Կ'ըսէին թէ սիրահարուեր էր հարուստ աղջկան մը եւ յուսախաբութենէն՝ խելագարեր :

Մէրաբիմ տղան. — Չատրճեանի աշակերտներէն էր, դեղեցիկ ձայն ունէր եւ երգելու անյազ փափաք : Զուարթ էր եւ խաղն ու պարը սիրող միանդամայն : «Քէօշէկիմ տղան» կը կոչէին զինք, կ'ըսէին թէ իր հայրը համբաւաւոր կաքաւոզ մը եղած է :

Իր աշակերտութեան օրերէն արդէն՝ ինքնիր վրայ մեծ համարում ունէր եւ շատերը կը հեզնէր : Աղքատութեան մէջ մեծցած եւ դժբախտ էր : Գիւշեր մը իր նշանածը տեսնելու դացած ատեն, աղջկան թաղին տղաքը զինք կը հալածեն եւ կը մտնեն մինչեւ աղջկան տունը : Անոնց հետապնդումէն ազատելու համար ան տանիքը կը բարձրանայ եւ երկու յարկանի տունէն վար կը դատկէ եւ ոտքը կը կոտրի : Թաղին տղաքը նախատուած կը զգան եղեր, որ տարբեր թաղէ տղայ մը դալով իրենց դրացին աղջիկը տեսնէ :

Այս դժբախտութեան յաջորդ օրը, զիս տարին ու դրին անոր տեղը : Տակաւին 16 տարեկան հասակիս մէջ, մէկ կողմէն դաս կ'ստնէի Չատրճեանէն եւ միւս կողմէ պղտիկներու դասերուն կը նայէի, 1890 թուին : Աւելի յետոյ Մէրաբին տղան քահանայ ձեռնադրուեցաւ :

Յարուբիւմ Թէրմանեանը : Գիշերօթիկ : Պատուելիին աշակերտած էր և անոր բաժնին մէջ կը պաշտօնաւարէր : Իր առաւելութիւնն այն էր, որ քայլ առ քայլ կը հետեւէր նորագոյն դասագիրքերուն : Մանկավարժական դասագիրքեր, մայրենի լեզու Ա. Բ. Գ. Գ. եւ այլն՝ վաղուց սկսեր էին Սաղմոսին, Աւետարանին, Նարեկին տեղը բռնել : Ան համեստ էր եւ կը սիրէր քննադատուիլ եւ քննադատել, սրբադրութեան ենթարկելու համար վարք, բարք և մեթոտ : Ան կը սիրէր աշխարհաբարը, հակառակ որ իր շուրջ եղողները գրաբարի քղանցքին ուժով կառչած էին տակաւին : Թէրճանեանը տողորուած էր արդիական ոգիով եւ հինին ու հին բարքերուն հետ չէր կրնար հաշտուիլ : Հետամուտ էր նաեւ թերթերու եւ հաւատարիմ ընթերցող մը անոնց : Փռնկը Պոլիսէն եւ Մշակը Թիֆլիսէն՝ իր անբաժան ընկերներն էին : Շատ երկար չմնաց իր պաշտօնին վրայ :

Անդրէաս Խոցեան : Չատրճեանի աշակերտներէն էր : Վերջը տարի մը Գիշերօթիկ Պատուելիին քով գրաբարի դասընթացքին հետեւեցաւ : Թէրճանեանի հակապատկերն էր ան եւ գրաբարի սիրահար : Հետո տեսակցելու ատեն գրաբար կը խօսէր, ինքս ալ գրաբարի բարեկամ էի : Այնչափ տարուած էր, որ նամակ մը եւ կամ պարզ շարադրութիւն մը գրելու ատեն՝ յանկարծ աշխարհաբարը գրաբարի վերածած կ'ըլլար, եւ կը դանդաւատէր, թէ իր կամքէն անկախ տեղի կ'ունենար ատիկա :

Չափազանց աշխատասէր էր, ինքնօգնութեան մէջ խորասուզուած զիս ալ կը տանէր իրեն հետ, յաճախ :

Մայր վարժարանը : Մայր վարժարանը երկյարկանի էր եւ կը նայէր Մայր Եկեղեցիին, իր բոլորակի ճակատով : Եկեղեցիի դասէն դուրս գալով զէպի կամարակապ գաւիթը անկէ վեր կ'ելլէին, քարէ աստիճաններով, 8—9 ոտք բարձր ուրիշ հարթութեան մը վրայ, եկեղեցիին երկայնքով եւ 20—30 ոտք լայնքով, ուր աջ ու ձախ տապանաքարեր կային : Դիմացը կու դար վարժարանի շէնքին ձախ թեւը, որուն ձախ կողմէն 5—6 քարէ աստիճաններով

պարխապին դռնէն փողոցը կ'ելլէին. իսկ շէնքին աջ կողմը 7—8 քարէ աստի-
ճաններ կ'առաջնորդէին վարժարանին բակը, աւելի ընդարձակ եւ ընդլայն-
ցած: Վարժարանին բակը աւելի ընդարձակ էր քան անկէ ցած դետինը, ուր
դերեզմանի քարեր կային, ոմանք թաղուած էին հոն դրամով եւ ուրիշներ՝ ի-
րենց արժանիքին համար: Բակի երեք կողմը կային շէնքեր: Անոր աջ թեւին
առաջին յարկը յատկացուած էր Առաջնորդին համար, իր հիւրանոցով՝ զոր
կը կոչէին ժամուռ օտան: Բակին մէջտեղէն կը բացուէր վարժարանին մուտ-
քը, անցքով մը որ աջ ու ձախ կը բաժնէր Գիշերօթիկ Պատուելիին բաժինն ու
տէվէլիիքը: Աջ կողմի դուռը կը տանէր պատուելիին մասը, կոկիկ տեղ մը՝ մէկ
վարժապետի հսկողութեան եւ ասրողութեան համապատասխան: Իսկ տէվէ-
լիիքը ասոր դիմացն էր, երկու անդամ եւ աւելի մեծ, 1 դիրին ձեւով, ուր մի-
նակը կը տանջուէր ատեն մը Կարպօ վարժապետ Կուպրինեանը, ատեն մըն ալ
Խաչ ամմու Անթիքաճեանը, յետոյ Մէրարին տղան, ի վերջոյ Խոցեան եւ ու-
րիշներ: Ասոնք իրենց օգնական կ'առնէին մեծ աշակերտներէն, որովհետեւ
անկարելի էր բոլորը մէկէն տեսնել եւ հսկել անոնց վրայ: Ոչ թէ սէրը, այլ
վախն էր որ կը տիրէր: Դպրոց երթալը դժոխք երթալու համադոր էր: Աշա-
կերտները շարաշար կը դորձածէին վարժապետին բացակայութիւնը: Կային
խելօքներ ալ: Ասոնք ամէնքը մէկ դաւազանով կը պատժուէին կարգով (սրա
տէկէնէկի): Բայց Խաչ ամմուն դժոխ էր եւ բոլորը մէկէն ծեծելու չափ ուժ ալ
չունէր, չունչը կը հասնէր:

Այս ընդարձակ սրահին համար երկու հոգիի հսկողութիւնը քիչ էր:
Ասոր վրայ կար երկրորդ յարկը, ճակատի մասին վերեւ, որ եկեղեցիին կը
նայէր: Հոն կը դասաւանդէր ատեն մը Չատրճեանը, որուն յաջորդեցին ու-
րիշներ: Վերի յարկը բաժանուած էր եւ ընդհանրապէս ճակատի մասը միայն
գործածելի էր եւ բաւարար՝ 40-ի չափ աշակերտներու: Տախտակէ սանդուխ-
ներով կը բարձրանային ձախէն՝ դէպի վարի յարկին մուտքին վրայ բացուող
դուռը. սանդուխը անձածկոյթ էր եւ բակին մէջէն կը սկսէր վերելքը՝ շէնքին
կցուած:

Նոր Աղբիւրը եւ Աւագանը: Մայր Եկեղեցւոյ բակին մէջ շինուած էր
ազբիւր մը որ եկեղեցիին եւ դպրոցին համար կը գործածուէր հին ժամա-
նակներէ ի վեր: Սալըճին, եկեղեցիին երեսփոխանութիւնը ստանձնելէ յետոյ՝
անոր խնամատարութեան մէջ հաւատարմօրէն եւ լուրջ կերպով կը կատարէր
իր պարտականութիւնը: Գանձին մէջ մնացած դրամը սկսած էր կալուածներ
գնելու եւ անոց հասութեան օգտագործման վրայ շահարկել: Մայր վարժա-
րանին յարակից բաց դետինը ծախու առած ըլլալով՝ առաջին անգամ բանջա-
րանոցի վերածած էր, և այդ պատեհութեամբ եկեղեցւոյ պարխապը ընդարձա-
կեց երեք կողմի վրայ: Յաջորդ քայլը բանջարանոցին համար ջուր հայթայ-
թելն էր: Չուրը կար Սաղին գլուխը, պէտք էր խողովակով դետինն տակէն բե-
րել հոն: Այս ձեռնարկին մէջ դժուարութիւններ կային: Հայ կաթոլիկ եկե-
ղեցիին հետ չկրցան համաձայնութեան գալ եւ հարկադրուեցան թուրք կա-
ռավարութեան միջոցով ջուրը բերել ու կէս բաժինը տալ մղկիթին, իսկ կէսը
տանիլ բանջարանոցին:

Աշխատութեան բաժինը յանձնուած էր հօրս, Յակոբ վարժապետին,
որ այդ ժամանակ իբրեւ մասնագէտ ճանչցուած էր Կիւրինի մէջ ջուրի ու աղ-
բիւրի գործերու ասպարէզին վրայ: Ան կը գիտնար թէ, ուրկէ՛ ջուր կարելի
էր հանել, բուսած խոտերէն ու գիրքէն դատելով:

Ջուրը կիսելու ատեն՝ ջուրին հոսանքը նկատի առնելով՝ անոր ուղղութիւնը դարձուցած էր բանջարանոցին եւ ապա միեւնոյն չափի խողովակով անջատած էր մզկիթին բաժինը: Բնականաբար ջուրը իր այդ ընթացքին մէջ՝ մեծադոշն բաժինը հայոց կու տար եւ նուազ մասը թուրքերուն, որոնք առարկութիւն չըրին ընաւ: Անոնք չգիտցան անգամ տարբերութիւնը:

Հայոց բաժինը կու դար եւ կը կազմէր նախ աղբիւրը, պարիսպին դուրսը ճամբուն վրայ, հասարակաց գործածութեան համար: Իսկ մէկ մասը կ'երթար դէպի Ղալան, պարիսպին երկու կողմերու անկիւնին վրայ քար ու կիրով շինուած աւազանը լեցնելու: Առաջինը 4—5 ոտք խորութեամբ 15×20 քառակուսի ոտք տարածութիւն ունէր եւ թաղարար:

Այս բանջարանոցին վայրը, կոտորածէն ետք, չէնքերու, պանդոկի եւ խանութի վերածուած է, եկեղեցւոյ եկամուտին կոկիկ շահ մը ապահովելու միջոց դառնալով:

Մայր եկեղեցիին մօտ, Գալէյի մը կողմը սարահարթին վրայ, փրկած տուներու պատերը կ'երեւէին մեր օրով: Հայրս ցոյց տուաւ ինձի օր մը այդ աւերակներուն մէջէն կիսովին կանգուն պատեր, որոնք լքելով՝ բնակիչները սիւսուեր են դէպի հեռուն երկու թեւի վրայ, աջ ու ձախ: Մեծ հայրս շինած էր Ջախճորի մէջ այն տունը, ուր անոր երեք զաւակները մեծցած էին: Յետոյ այդ կտոր մը հողը երեք մասի բաժներ էին, եւ ուրիշ երկու բնակարաններ ալ շինուած էին, ուր երեք եղբայրները իրենց ընտանիքներով կը բնակէին:

Մայր եկեղեցին, զպրոցը, առաջնորդարանը, բանջարանոցը եւ աւազանը շրջապատուած էին ամուր ու հաստ պատերով: Գալէյի հետաքրքրական մասը այն էր, թէ անոր բացուածքներէն մէկը ստորերկրեայ ճամբով մը կը տանէր մինչեւ առնուազն 5—6 մղոն ճամբայ, էօրէնի կողմը, լեռներու մէջ:

Յովհաննէս աղա Գոչուեան: Երբ խօսքը կը թափան մարդին կը վերաբերի՝ կիւրիցիներ պէտք է գլխարկին հանեն, յիշատակելու համար Յովհաննէս աղա Գոչուեանը, որ մասնաւորապէս աղջիկներուն կը թուրքիւն տալու իր ջանքերով ու զոհողութիւններով՝ հաւանօրէն միակն է իրական սեռի դաստիարակութեան անդաստանին մէջ: Արդարեւ ոչ ոք կրնայ հաւասարիլ անոր մտքին ազատ թռիչքին ու գրարարի բարձրութեան: Որովհետեւ, տղոց կը թուրքիւն եւ ուսում տալու գործը սովորական պէտք ճանչցուած էր արդէն եւ մենք ունեցած ենք հարուստ ու միջակ ազգայիներ, որոնք զոհողութիւն յանձն առած են նիւթապէս եւ բարոյապէս տղոց դաստիարակութեան համար: Իայց Յովհաննէս աղան մէկն էր այն հազուադէպ դէմքերէն, որոնք խաւարին ու աղիտութեան դէմ կռուելու դժուարին գործը յանձն կ'առնեն: Ան էր որ առաջին անգամ եւ գրեթէ առանձին զարկ տուած է աղջկանց վարժարանին, կրցած է ծառանալ հնացած մտայնութեան դէմ, որ պայքար կը մղէր աղջիկներու կը թուրքեան դէմ, առարկելով թէ անոնք իրենց սիրածին կամ նշանածին նամակ պիտի գրէին:

Յովհաննէս աղան հեռատես մարդ, անմիջապէս պէտք համարեց աղջկանց դաստիարակութիւնը տղոց հաւասար: Առ այդ իր թափած ճիւղը կը հիմնուէր այն համոզումին վրայ, թէ մայրերու ուսումն ու կը թուրքիւնը ցեղին զաւակներուն մտային եւ բարոյական յառաջդիմութեան պիտի նպաստէին: Տգէտ մայր մը ի՞նչ կրնար տալ իր զաւակներուն: Բնականաբար, ժողովուրդին հաճելի չէր այսպիսի մարդ մը, եւ շատեր անոր կը նայէին իրերէ կախարդի:

Դպրոցի բացումէն, երկու երեք տարի ետք, լաւ կը յիշեմ, Աւագ շաբթուն մէջ էր, աշակերտուհիներ՝ քիչ շատ փարգացած ըլլալով, եկան իրեն հետ Մայր եկեղեցիին ձախ դասը խմբովին կանգնեցան: Դպրաց դասը, աղաներ, սկսանք երգել. «Այսօր անճառ լուսոյն ծագումն» առաջին համարը եւ երբ ավարտեցինք երկրորդ համարը միւս դասէն, «Բանին հօր փառաց լուսոյ» աղջիկները երգեցին նոյն եղանակի բարձրութեան եւ ներդաշնակութեան համովն ու հոտովը: Մենք՝ աղաքս նոր բան մը նշմարեցինք բոլորովին անսովոր եւ . . . «ապօրինի» համարուած: Աղջկանց եւ կիներուն տեղը հող չէր. անոնք դատուած էին այրերէն վանդակորմով (Թախտապէն) եւ երկաթէ բարակ ու հաստատուն ձողերով հիւսուած, վերնատունը: Յովհաննէս աղան, ժողովուրդին բաժնին մէջ դասին կից կանգնած կը հսկէր, կը խրախուսէր: Գ. համարը՝ (Գլխոյն ընտրել հօտին փոքու) մենք սկսանք եւ ավարտեցինք աւելի մեծ եռանդով, մրցակցութեան եւ լաւագոյնը տալու փորձով: Գ. համարը (Գասուց իւրոց աշակերտաց) աղջիկները երգեցին նոյնչափ յաջող ու ներդաշնակ: Այդ իրիկուն մեր քոյրերը շատ ներդաշնակ եւ համարձակ երգեցին: Անոր վերջիւս իսկ կը յուզէ զիս եւ պիտի ուզէի յաւերժացնել այդ մտապատկերը, ինչպէս անցեալի բոլոր այն պահերը, որոնք անմահն քաղցրութիւն մը ունին մեր անշէջ յիշատակարանին մէջ:

Յովհաննէս աղա ազգային դէմքերու այն եզակի մարդոցմէ մէկն էր, որուն զնահատանքը պիտի չկրնան տալ Կիւրինցիները ըստ արժանւոյն:

Շուրջ 1890 թուականին տեղի ունեցած պէտք է ըլլայ այս դրուագը: Հաւանաբար դպրոցը սկիզբ առաւ 1886—1887 թուականին: Յովհաննէս աղան բնականաբար իրեն համախոհներ ալ ունէր, բայց ինքն էր շարժիչ մեքենան եւ իրմէ յետոյ դժուարութիւնը այլեւս հարթուած էր:

Քաղաքական — ընկերային կեանք: Դեռ 1890-էն առաջ, 80-ական թուականները Կիւրինի հայ ժողովուրդին զարթնումի շրջանը եղած են: Ազգային երգերը սկսած էին ծաւալել հանրութեան մէջ: Դպրոցներէն ներս, Չաթենէն անուած հերոսներու անուններով, — Սուրէն, Տաճատ, Թաթուլ, Շաւարշ, Վահան, Հմայեակ եւ այլն, հետաքրքրութիւն ստեղծելով ուսանողութեան մէջ այս պատմական դէմքերու քաջութեանց եւ արժանիքներուն մասին: Այդ արթնութիւնը ուսանողներէն սկսաւ փոխանցուել մեծերուն, որոնցմէ ուսմանք շատ զգուշաւոր, իրենց հասկացողութեան դէմ կը նկատէին եղածը: Շատեր դէմ էին կատարուածի թափէն եւ շարունակ կը զգուշացնէին իրենցինները այդ չափազանցութենէն:

1880-ին վերջերը եւ 90-ի առաջին տարիներուն նորահաս երիտասարդութիւնը մասամբ ազատութեան տենչով համակուած էր: Միեւնոյն ժամանակ, թուրք կառավարութիւնը տեղեակ ըլլալով հայոց մէջ տեղի ունեցող հոգեկան ա՛յս փոփոխութեան՝ զբաճնութեան կ'ենթարկէ գերքերն ու թերթերը: Հալածանքը ծայր տուած էր: Հայ ժողովուրդը, նոր արշալոյսի մը յոյսով, անհամբեր աչքը յառած էր քրիստոնեայ Մերոպային: Ոմանք Ռուսիոյ յոյսով, անհամբեր աչքը յառած էր քրիստոնեայ Մերոպային: Ոմանք Ռուսիոյ յոյսով, անհամբեր աչքը յառած էր քրիստոնեայ Մերոպային: Ոմանք Ռուսիոյ յոյսով, անհամբեր աչքը յառած էր քրիստոնեայ Մերոպային: Ոմանք Ռուսիոյ յոյսով, անհամբեր աչքը յառած էր քրիստոնեայ Մերոպային: Ոմանք Ռուսիոյ յոյսով, անհամբեր աչքը յառած էր քրիստոնեայ Մերոպային:

րագմէն զըրուագներ կը սրատէմին, եւ կը կարծէին թէ առաւօտ մը պիտի ար-
թըննային եւ թրքական լուծէն ազատուած պիտի դառնէին իրենք զիրենք:

Հայերէն երգերէն ոմանք, մասնաւորապէս «Հայը բանտէն չի վախնար»
երգը այնչափ շատ յեղեղուած էր հրապարակի վրայ, որ թուրք բնակիչներ
եւ իրենց լակոտներն ալ սկսած էին երգել զայն, վերածելով «Թուրքն ալ հա-
յէն չի վախնար»ի:

1880-էն մինչեւ 1895 ի՞նչ յուսախարութիւններ մեր հաւատքը խախ-
տեցին եւ այդ միջոցին տեղի ունեցած պատրիարքական ընտրութիւնները որ-
չափ մեծ հետաքրքրութիւն արթնցուցին ամէնուս մէջ: Խրիմեան Հայրիկ Ներ-
սէս Վարժապետեան եւ ապա Մատթէոս Իգմիրլեան ժողովրդական պաշտա-
մունքի առարկայ կը դառնային:

Պերլինի վեհաժողովին մէջ, Խրիմեան Հայրիկի ու Մինաս Չերազի ե-
րեւումը հայ ժողովուրդին առջեւ նոր էջ մը բացած էր, ուր ան սորվեցաւ
իրեն տրուած դասը քրիստոնեայ եւ հայոց պաշտպան կարծեցեալ եւրոպացի-
ներէն: Նոյն ատեն դաւաններու մէջ, խիզախ կղերականներ, Եզնիկ եւ ապա
Մուշեղ վարդապետներու պէս, իրենց վեց հարուածի քարոզը կ'արձագանգէին
ուսկնդիր հասարակութեան, արծարծելու համար անոնց սրտերուն մէջ դա-
րերէ ի վեր անթեղուած ազատութեան կայծը:

Հասարակական դործիչներ կը յայտնուէին մերթ ընդ մերթ գաղտնի ու
չըլլըլիկ ճամբաներով: Անոնցմէ մէկը մեզի սորվեցուց «Ձայնը հնչեց Երզրու-
մի հայոց լեռերէն երգը», առանց խօսքի ու քարոզի, բայց մենք նշմարեցինք
անոր ցած ձայնով խօսակցութիւնը վարժապետին հետ: Աղօտ կերպով գի-
տէինք թէ բան մը կը դառնար:

Սարգիս աղո՛ Մինասեան: Մինասեան Սարգիս աղան այն մեծ դէմքե-
րէն մէկն էր, որ թուրքը կ'ատէր ու չէր կրնար իր ատելութիւնը ծածկել: Բա-
րեկիրթ էր բայց ծայրայեղօրէն յանդուգն՝ իր վարմունքին մէջ, թուրքերու
դէմ:

Իր հայրը՝ Աւետիք աղան, հակառակ էր անոր ընթացքին եւ ըմբռնու-
մին, բայց հին սերունդի յատուկ իր փորձառութիւնը չէր կրնար հաղորդել
որդւոյն: Ան հարուստ էր, դեղին ոսկիներ ունէր պահուած, սենեակներուն
պատերուն մէջ:

Հաճի Սարգիս աղային բարեւի ձեւը եզակի էր, առանց մեծամտութեան
ամէնուն հանդէպ: Անցնողին դէմ քովնտի կանգնած կը խոնարհէր եւ իր աջ
ձեռքը շրթներէն դէպի ճակատը տանելու հանդիսութեամբ մը կը կատարէր
զայն արագ ու շուտ: Կ'ըսէին թէ իր հայրը վարժեցուցեր էր զինք բարեւի այդ
ձեւին:

Ուսեալ էր. բաւական լաւ գիտէր հայերէն լեզուն, մանաւանդ՝ հա-
շուակալութիւնը իրրեւ վաճառական: Գիտէր նաեւ տաճկերէն: Կը կարդար
քանի մը թերթեր, թէ՛ հայերէն եւ թէ՛ թուրքերէն լեզուով: Հետաքրքիր հետ-
թեանց. Խելօքին երգերուն հաւաքածոն ունէր եւ կը պահէր խնամքով:

Տարուան մէջ քանի մը անգամ կ'այցելէր Ձախձոր թաղը, Շիրվանենց
էծէին, 140 տարեկան այրի պառաւ կնոջ մը, անոր հետ խօսակցելու համար,
ով գիտէ ի՞նչ նիւթի մասին, այդքան հետաքրքրութեամբ, ու միշտ դրամա-
կան նուէր մը կ'ընէր անոր:

Սանդազառ երիտասարդութիւնը համակիր էր իրեն եւ իրմէ կը քաջալերուէր հասարակական եւ ազգային դործերու մէջ: Դեռ քանի մը տարի առաջ, Սասազաղի առուին վրայի վարժարանին ուսուցիչ Չոօնեանին (Չէյթունցի) հետ՝ հայ ժողովուրդը իր դարաւոր քունէն արթնցնելու առաքելութեամբ «Աւետարներ» թերթին մէջ յօդուած մը ստորագրած էին, եւ ազգային ուրիշ երգերու հետ ժողովրդականացուցեր էին «Տեսէք ազաւնին Նոյեան տապանին» երգը, որուն արդիւնքը այն եղած էր, որ Չոօնեան շուտով փախած էր Չէյթունցի քաջերու առաջնորդութեամբ, իսկ Մինասեան եւ ուրիշ կասկածելի կարծուած անձեր՝ վճարեցին բանտարկութեան քաւութեամբ եւ մեծ դամարներով:

Ասկէ յետոյ Մինասեան թէեւ կը կծկուէր քիչ մը, բայց չէր կրնար երկար ատեն մնալ իր պատեանին մէջ. 1893-ին դարձեալ տիրացած էր իր դիրքին, կարծես թէ ազատութիւնը հետզհետէ մարմին կ'առնէր իր երեւակայութեան առջեւ:

Մեծագոյն խանդավառութիւնը: Կիրակի առաւօտ մըն էր, մթնշաղին, դանդաղները կը հնչէին եւ բարեպաշտ ժողովուրդը եկեղեցի կը դիմէր: Թագերու մէջ, որոշ տեղեր, ուր ժամանցի համար ցերեկ ատեն մարդիկ հաւաքուած կ'ըլլային, այս օր առաւօտ կանուխ իրարու քով եկեր էին: Անտովոր էր ասիկա, այդ ժամուն: Մէկը միւսին կը պատմէր, ուրիշ մը վերլուծումներ կ'ընէր, եկեղեցիին դանդաղին ձայնը իր նպատակին չէր ծառայած: Մարդիկ ուրախ էին, որովհետեւ իրրեւ թէ՛ վեց վիլայէթները հայերուն տրուած էին: Այս անգամ ջորեպանները չէին որ իրենց բեռներուն հետ այդ լուրը բերած ու թափած էին ամէն կողմ:

Լուրը իր ճամբան կը դանկ որեւէ կերպով, ըլլայ նամակաբեր աղանջիին կտուցով, ըլլայ՝ սողացող օձի միջոցաւ: Ամբողջ Կիւրիքը, իր ծայրագոյն թաղերով փոխ-հաղորդակցութեան մէջ էր, ելեկտրական հոսանքէ մը մղուած է կարծես: Ահա կու դային ազատութիւն եւ ազատ հայրենիք, դարերու երազը իրականացնելու:

Շարունակեցի ճամբաս եւ հասայ Մայր եկեղեցի, միտքս յափշտակուած ազատութեան տեսիլքով, միանգամայն կասկածելով անոր կարելիութեան մասին: Ինչպէս թուրքը թոյլ պիտի տար, երկու եւրոպացի քննիչներու դատավճռին անսալով, որ հայ ժողովուրդը՝ այնքան երկար տարիներու գերութենէ մը ետք, ստանար իր հայրենի երկրին ինքնավարութիւնը:

Եկեղեցին դատարկ էր դրեթէ, բացի քանի մը ծերերէ: Ուշ ատեն միայն, «Խորհարդ Խորին» երգուած ժամանակ, բազմութիւնը ալիք-ալիք եկեղեցին կը լեցուէր, կենսուրախ:

Այդ օր պատարալի արարողութեան սպասարկութիւնը Մէրարին Տղուն վիճակուած էր: Վերջապէս թափօրը կը դառնայ, եւ անոր ընթացիկ շարականին տեղ՝ Մէրարին տղան կ'երգէ «Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մնալու» երգը, հաւանաբար խորհելով թէ ծայրայեղ միտքերով ազգային երգ մը կրնար քննադատութեան փորձանք մը ըլլալ իր գլխուն: Ժողովուրդը ընդհանրապէս կը ներէ անոր այդ անմեղ հնարամտութիւնը: Հոս սակայն, պահանջատու տարրը, որ դեռ մինչեւ երէկ, դէմ էր երիտասարդ սերունդի ազատութեան յանդուզն ձեռնարկներուն, կարծես թէ քիչ մը կը մօտենայ «խենթերու» մտայնութեան եւ քիչ մը ետք դառնալով կը հասնի ու կանգ

կ'առնէ երկուքին ճամբուն մէջտեղ ու կը հարցնէ, արդեօք իրականութի՞ւն է եւ պէ՞տք էր լուռ մնալ տղոց հանդէպ :

Իսկ թուրք բնակչութիւնը լուռ հանդիսատես կ'ըլլար այդ անց ու դարձին, կը հետեւէր ամէն շարժումի, եւ ատելութեան մաղձը աւելի կը կուտակուէր անոր մէջ :

Թուրքեր կային, որ հայու մը պէս հայերէն կը խօսէին : Կային իրենց մէջ հեռատես մարդիկ, ինչպէս դատաւոր Մեմէտ Էփենդիս, որ տասնեակ մը տարիներ առաջ իր գաւազը՝ Նշան Վարժապետ Չատրճեանի քով դրկած էր, Երական մէկ երկու ժամ հայերէն լեզուն գրեւ-կարգալ սորվելու համար : Մենք այն ատեն կը հրճուէինք եւ հպարտ կը գրայինք մեր ազգին, կրօնքին ու լեզուին կարեւորութիւնը ի մտի ունենալով : Միամիտներ էինք... Պարզապէս միամիտներ :

Ս. Յ. ԲԱՆԵԱՆ